

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Հայ-Թրքական Սահմանի Բացման Գնդակը Կը Շարունակէ Մնալ Թրքական Կողմին Սօս

Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու կարգաւորման նպատակով նշանակուած բանազնացներու Վիեննայի մէջ կայացած չորրորդ հանդիպումի աւարտին յայտարարուեցաւ թէ, կողմերը համաձայնած են բանալ ցամաքային սահմանը երրորդ երկիրներու քաղաքացիներուն համար՝ ամենասեղմ ժամկէտներու մէջ:

Վիեննայի մէջ Յուլիսի 1-ին կայացած հանդիպման ընթացքին, շուրջ 30 տարի դիւանագիտական յարաբերութիւններ չունեցող ու փակ սահմաններով ապրող երկու երկիրներու բանազնացներ՝ Ռուբէն Ռուբինեանը եւ Սերտար Քըլլըճը որոշած են մեկնարկել նաեւ Հայաստան-Թուրքիա ուղիղ օդային բեռնափոխադրումները:

Այս յայտարարութիւնը որոշ չափով անակնկալ էր, նկատի առնելով որ, նախ քան այս վերջին հանդիպումը, Հայկական կողմը լաւատես չէր ընթացող բանակցութիւններուն կապակցութեամբ: Վարչապետ Նիկոլ Փաշինեան իր վերջին մամուլի ասուլիսի ժամանակ շատ զգուշաւոր էր ընթացող բանակցութիւններէն իր ակնկալիքներուն վերաբերեալ, յիշեցնելով նախկին փորձը, երբ կողմերուն միջեւ ստորագրուած փաստաթուղթը անգամ մնաց չիրագործուած: Հայկական կողմի բանազնաց՝ Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբէն Ռուբինեան նախքան Վիեննա իր մեկնիլը տարօրինակ գտաւ Թուրքիոյ տարբեր պաշտօնեաներու յայտարարութիւնները այն մասին, որ իրենք գործընթացը կը համաձայնեցնեն Ատրպէյճանի հետ:

«Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացի մեկնարկից ի վեր Հայաստանը շատ կառուցողական է եղել: Հայաստանն ունի քաղաքական կամք եւ ցուցադրել է այդ կամքը՝ արագ կարգաւորման հասնելու: Գործընթացի յաջողութիւնը կախուած է Թուրքիայի համապատասխան կառուցողականութիւնից եւ քաղաքական կամքից: Ինչպէս տեսնում էք՝ մինչեւ այս պահին առանձնապէս մեծ յաջողութեամբ չկայ, դա տեսանելի է», ըսաւ Ռուբինեան:

Ինչպէս յայտնի է Թուրքիա-Հայաստան սահմանը փակ կը մնայ 1993 թուականէն սկսեալ թրքական կողմի որոշումով: Այդ թուականէն ասդին, Անգարան սահմանի բացման համար նախապայման կը նկատուի՝ Ատրպէյճանի «գրաւեալ տարածքներու» վերադարձը:

Եւրոպական կառոյցները եւ Ամերիկայի Միացեալ Նահանգները

Հայաստան եւ Թուրքիա որոշած են Բանալ Ցամաքային Սահմանը Այլ Երկիրներու Քաղաքացիներու Համար

Հայաստանը եւ Թուրքիան պայմանաւորուած են բանալ ցամաքային սահմանը երրորդ երկիրներու քաղաքացիներու համար՝ ամենասեղմ ժամկէտներու մէջ:

Վիեննայի մէջ Յուլիսի 1-ին կայացած հանդիպման ընթացքին, շուրջ 30 տարի դիւանագիտական յարաբերութիւններ չունեցող ու փակ սահմաններով ապրող երկու երկիրներու բանազնացներ՝ Ռուբէն Ռուբինեանը եւ Սերտար Քըլլըճը որոշած են մեկնարկել նաեւ Հայաստան-Թուրքիա ուղիղ օդային բեռնափոխադրումները:

Ըստ երկու Արտաքին Գործերու Նախարարութիւններուն՝ յատուկ ներկայացուցիչները քննարկած են յարաբերութիւններու լիարժէք կարգաւորման հասնելու հնարաւոր քայլերը՝ ընդգծելով կարգաւորման գործընթացը առանց նախապայմաններու շարունակելու պայմանաւորուածութիւնը:

Նշենք, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ ցամաքային սահմանը փակ է 1993 թուականէն:

Միւս կողմէ, Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Մեւլուտ Չաւուշօղլուն Աւստրիոյ արտաքին գործերու նախարար Ալեք-



Հայաստանի եւ Թուրքիոյ բանազնացները՝ հանդիպումին ընթացքին

սանտր Շալենպըրկի հետ Անգարայի մէջ կայացած մամուլի համատեղ ասուլիսի ժամանակ դարձեալ ըսած է որ, Անգարան Երեւանին առաջարկած էր Հիւրընկալել 2 երկիրներու յարաբերութիւնները կարգաւորող առաջին հանդիպումը: «Մենք Հայաստանին առաջարկած էինք, որ առաջին հանդիպումը կրնանք անցընել Երեւանի մէջ, բայց Հայաստանը դեռ պատ-

րաստ չէ անոր՝ ներքին ճնշման պատճառով»:

Երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւնները կարգաւորելու համար նշանակուած կողմերու բանազնացները առաջին հանդիպումը Մոսկուայի մէջ կայացնելէ յետոյ, այնուհետեւ երեք անգամ հանդիպած են Վիեննայի մէջ:

ԱՄՆ Ներկայացուցիչներու Պալատի Յատկացումներու Օրինագիծը Կը Ներառէ Օգնութիւն Հայաստանին Եւ Արցախին



2023-ի ֆինանսական տարուայ Պետական, արտաքին գործառնութիւններու եւ յարակից ծրագրերու Ներկայացուցիչներու Պալատի յատկացումներու օրինագիծը կը ներառէ մարդասիրական օգնութիւն Հայաստանին՝ 60 միլիոն տոլարի չափով եւ 2 միլիոն տոլար՝ Արցախի համար:

Յանձնաժողովի առաջարկը կը ներառէ ոչ-պակաս քան 60.000.000 տոլար Հայաստանին՝ տնտեսական զարգացման, մասնաւոր հատուածի արտադրողականութեան, ու-

ժանիւթային անկախութեան, ժողովրդավարութեան եւ օրէնքի գերակայութեան եւ այլ նպատակներու համար:

Բացի այդ, յանձնաժողովի առաջարկը կը ներառէ նաեւ ոչ-պակաս քան 2.000.000 տոլար՝ Լեռնային Ղարաբաղի մէջ ակնազերծման աշխատանքներուն համար, եւ մտահոգուած կը մնայ Լեռնային Ղարաբաղի մէջ հակամարտութեան մարդասիրական ազ-

Հայաստան Պիտի Շարունակէ Պահպանել Կառավարման Խորհրդարանական Համակարգը. Փաշինեան

Յուլիս 5-ին Հայաստանի մէջ նշուեցաւ Սահմանադրութեան օրը: Այս առթիւ իր շնորհաւորական ուղերձին մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեան ըսաւ որ, Հայաստանը պիտի շարունակի պահպանել կառավարման խորհրդարանական համակարգը, որովհետեւ 2021 թուականի իրադարձութիւններն ապացուցեցին, որ այս համակարգը ձգնաժամեր կառավարելու, քաղաքական բանավէճին ժողովրդի ներգրաւման ու վճռական մասնակցութեան աւելի գործուն մեխանիզմներ կ'ապահովէ:

«Մեր Սահմանադրութեան ոչ փոփոխելի յօդուածները ձեւակերպել են Հայաստանի Հանրապետութեան ազգային-պետական տեսլականը: Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետութիւնն ինքնիշխան, ժողովրդավարական, ընկերային, իրաւական պետութիւն է:

«Հայաստանի Հանրապետութիւնում իշխանութիւնը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ի Վերջոյ Ո՞վ Իշխանագրկուեց. Ընդդիմադիր Խմբակցութիւնները Կազմաքանդուում Ե՞ն

ՎՈՎԱՅ ՅԱՎՈՐԵԱՆ

Խորհրդարանական ընդդիմութիւնը փողոցային պայքարը վերսկսելուց յետոյ յայտարարեց, թէ «ընդդիմութիւն» շարժման նպատակը գործող իշխանութեանը հեռացնելն է՝ իշխանագրկելը: Պայքարից մօտ 2 ամիս անց, սակայն, ոչ թէ գործող իշխանութիւնը իշխանագրկուեց, այլ հենց ընդդիմութիւնը:

Նախ «Պատիւ Ունեմ» խմբակցութեան ղեկավար Արթուր Վանեցեանը վաչր դրեց մանդատը, քանի որ խոստացել էր խորհրդարան չվերադառնալ, եթէ շարժումը իր առջեւ դրուած նպատակին չհասնի: Նաեւ լուծարուեց «Պատիւ Ունեմ» խմբակցութիւնը, քանի որ վանեցեանի՝ մանդատը դնելուց յետոյ «Հայրենիք» կուսակցութիւնը յայտնեց, որ նման դաշինք, որպէս այդպիսին, այլեւս գոյութիւն չունի:

Ապա «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութիւնը պաշտօնները հեռացրեց՝ իշխանագրկեց ընդդիմութեան քուտայով ԱԺ նախագահի տեղակալ Իշխան Սաղաթեյեանին եւ ԱԺ տնտեսական հարցերի մշտական յանձնաժողովի նախագահ Վահէ Յակոբեանին:

Վահէ Յակոբեանը իշխանութեան այս որոշումներից յետոյ կայացած հանրահաւաքում, անդրադառնալով իրեն պաշտօնից հեռացնելու իշխանութեան որոշմանը, յայտարարեց, թէ սա հերթական հարուածն էր մեր պետականութեանը, պառլամենտարիզմի ինստիտուտին էր հարուած, եւ իրենք մտածելու ոչինչ չունեն:

Եւ չնայած ընդդիմութիւնը սա հարուած էր համարում պետականութեանը, այնուամենայնիւ իրենք էլ շարունակեցին գործընթացը: Մէկը միւսի հետեւից յանձնաժողովներում զբաղեցրած պաշտ

տօններից հրաժարական ներկայացրին ընդդիմադիր պատգամաւորներ Հայկ Մամիջանեանը, Արթուր Խաչատրեանը եւ Արմէն Գեորգեանը: Միայն Թագուհի Թովմասեանն էր, որ առանձնացաւ գործընկերներից եւ յայտարարեց, որ շարունակելու է պաշտօնավարել ԱԺ Մարդու իրաւունքների պաշտպանութեան եւ հանրային հարցերի մշտական յանձնաժողովի նախագահի պաշտօնում: Վերջինս յայտարարեց, թէ որոշել է շարունակել իր գործունէութիւնը՝ որպէս յանձնաժողովի անկուսակցական, անկախ նախագահ՝ առաջանցիկ մեղադրանք ներկայացնելով ընդդիմադիր գործընկերներին: «Եթէ գործընկերային համերաշխութեան մասին էր խօսքը, ապա պէտք է բոլորս գործընկերաբար Արթուր Վանեցեանից յետոյ հրաժարուէինք մեր պատգամաւորական մանդատներից: Դեռ նախորդ տարի յայտարարել էի, որ բոլոր ընդդիմադիրներով պէտք է վաչր դնենք մանդատները՝ պայմանով, որ յաջորդներից էլ որեւէ մէկը չի վերցնելու իրեն տրուած մանդատը: Այսինքն՝ մանդատից երբեք կառչած չեմ եղել», - գրել էր Թովմասեանը:

Այսօր էլ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արթուր Ղազինեանն է յայտարարել՝ վաչր է դնում մամանդատը: Ղազինեանը պատճառների մասին չի խօսել, միայն նշել է, որ այս ԱԺ-ում որեւէ օրակարգով իր հետագայ աշխատանքն այլեւս չի պատկերացնում:

Մանդատների թեման ամփոփելով՝ Արմ Վարդեանեանը լրագրողների հետ զրոյցում նշեց, որ եթէ հասկանան, որ դրանով ինչ-որ յաւելեալ արժէք կարող է ստեղծուել, որեւէ սահմանափակում կամ կաշկանդուածութիւն չունեն:

Ստացուեց այնպէս, որ փողոցներում փաշինեանի հրաժարակա-

նը պահանջող, այս իշխանութիւններին իշխանութիւնից վաճառող, իշխանագրկող ընդդիմութիւնը պայքարից երկու ամիս անց ինքը իշխանագրկուեց: Իսկ թէ ինչո՞ւ են ընդդիմադիր որոշ պատգամաւորներ վաչր դնում մանդատը, հրաժարուում յանձնաժողովներում պաշտօններից, արդեօք պաշտօններից հրաժարուելը ինչ-որ յաւելեալ արժէք է ստեղծում, ի տարբերութիւն մանդատները դնելու, եւ ի՞նչ է նշանակում այս գործընթացին Թագուհի Թովմասեանի չմիանալը, փորձեցինք պարզել «Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան անդամ, 7-րդ գումարման պատգամաւոր Անի Սամսոնեանից:

«Խորհրդարանական ընդդիմադիր խմբակցութիւնները քանդուում են, որովհետեւ որոշ պատգամաւորներ արդէն հասկանում են, որ «Հայաստան»-ը՝ որպէս դաշինք, եւ Հանրապետական կուսակցութիւնը այլեւս քաղաքական որեւէ հեռանկար չունեն, հետեւաբար օր առաջ պէտք է լքել խորտակուող նաւը: Սա օրինաչափ վարքագիծ է սպոնտան, միմեանց հետ կապ չունեցող, գաղափար չունեցող մի խումբ պատհասպաշտ անձանցից կազմուած դաշինքների կամ քաղաքական միաւորների համար», - ասաց Անի Սամսոնեանը:

Բացի դրանից, ըստ Սամսոնեանի, այդ մարդիկ պատրաստ չէին որպէս ընդդիմադիր իրենց գործն անելու, նրանց հենց սկզբից խոստացել էին իշխանական իւղտ պատառներ: Այդ իսկ պատճառով այսօր խորհրդարանում առաջացել է ճգնաժամ: «Որքան էլ իշխանութիւնը չուզի դա տեսնել, միեւնոյն է, օրէնսդիր մարմինը՝ որպէս ինստիտուտ, լիարժէք չի կարողանում իրականացնել իր գործառնութիւնները եւ կենսունակ չէ, կենսունակ դառնալու էլ այլեւս ոչ մի հեռանկար չունի: Պառլամենտական երկրի համար սա վտանգաւոր

է եւ նաեւ՝ խայտառակութիւն», - ասաց ԼՀԿ ներկայացուցիչը:

Բոլոր դէպքերում, Անի Սամսոնեանը գնահատեց նաեւ Արթուր Վանեցեանի սկզբունքային դիրքորոշումը: «Ասել էր՝ արեց, չնայած դա նրա ապաքաղաքական վարքագծի հետեւանքն էր», - նշեց Սամսոնեանը:

«Դիմադրութիւն» շարժման եւ դրա նախաձեռնողների մասին Սամսոնեանը չուզեց խօսել: «Սկզբունք ունեմ՝ ընկածին չխփել», - պարզաբանեց Անի Սամսոնեանը:

Եթէ ընդդիմադիրները յոյս ունէին իշխանական իւղտ պատառներ ստանալ, ապա ինչո՞ւ ընտրութիւնների արդիւնքների հրապարակումից յետոյ, երբ պարզ դարձաւ, որ «Քաղաքացիական Պայմանագիր»-ը ստացել է ընտրութիւններին մասնակցած քաղաքացիների ձայների գերակշիռ մասը եւ ունի մեծամասնութիւն, վերցրին մանդատները՝ հարցին Սամսոնեանը պատասխանեց, որ ընդդիմութիւնը դա արեց Նիկոլ Փաշինեանի իշխանութիւնը լեզիտիմացնելու համար: Իսկ հիմա չեն դնելու այդ մանդատները վերալեզիտիմացնելու համար:

Ստացուում է, որ, ըստ Սամսոնեանի, խորհրդարանական ընդդիմութիւնը այնքան էլ ցանկութիւն չունի գործող իշխանութեանը դեմադրութիւնը, եւ իրենց միակ նպատակը իշխանութիւն վերցնելն է:

«Civic.am»

Ուժերի Հաւասարակշռութեան Խախտումը՝ Տարածաշրջանային Ապակայունացման Գործօն

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

44-օրեայ պատերազմի հիմնական պատճառներից մէկն այն էր, որ Ադրբեյջանին յաջողուել էր խախտել տարածաշրջանի ռազմական հաւասարակշռութիւնը՝ կուսակցով զգալի չափով աւելի սպառազինութիւն: Ծակատամարտի ելքի վրայ յատկապէս ազդեցութիւն ունեցան «Բայրաթթար» անօդաչու թռչող սարքերը, որոնք ներմուծուել էին Սեպտեմբերի 27-ից մի քանի ամիս առաջ, եւ Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան բանակը չհասցրեց ապահովել դրանց հակազդման միջոցները: 2020 թ. պատերազմից յետոյ էլ Ադրբեյջանը շարունակում է ակտիւորէն գիւտուել, եւ այդ մասին պարբերաբար յայտարարում է Իլհամ Ալիեւը երկրի գիւտու չեւ հանդիպումների ժամանակ: Օրերս այցելելով Արցախի օկուպացուած Քարվաճառի շրջան՝ յայտարարեց, թէ Բաքուն ամենաարդիական գիւտաւանակների ձեռք բերման պայմանագրեր է կնքել: Նրա խօսքով՝ այդ պայմանագրերն արդէն իրականացոււմ են, Ադրբեյջան են բերուում նոր գէնք եւ արդիական

գիւտեխնիկայ: Վերջինս նաեւ հպարտացաւ, որ Արցախի օկուպացուած շրջաններում Ադրբեյջանի գիւտու չեւ նոր ստորաբաժանումներ են ձեւաւորուում, եւ չմոռացաւ խօսել 44-օրեայ պատերազմի մասին՝ մէկ անգամ եւս փորձելով ինքն իրեն եւ ադրբեյջանցի գիւտու չեւ ռազմական համոզել, որ իրենք են ապահովել ճակատամարտի ելքը, այլ ոչ թէ Թուրքիան՝ ջիհադիստ ծայրահեղական գիւտու չեւ չեւ միասին: Նա նոյնիսկ ներկայացրեց ակնյայտ սուտ տեղեկութիւն, թէ, իբր, ադրբեյջանցի գիւտու չեւ չեն փախել մարտի դաշտից: Քարվաճառ կատարած այցի ժամանակ Ալիեւն աւելի «առաջ գնաց» իր դատողութիւններում եւ յայտարարեց, թէ միջազգային յարաբերութիւններում կարեւոր դերը պատկանում է ուժի գործօնին:

Արուած վերջին արտայայտութիւնը բացառապատում է Հայաստանի հետ ընթացող բանակցութիւններում Ադրբեյջանի որդեգրած մարտավարութիւնը: Նա ձգտում է ուժի դիրքերից խօսել բանակցային սեղանի շուրջ՝ փորձելով առաջ տանել միայն իր երկրին ձեռնարկութեզերը: Սակայն

Բաքուի առաջնորդն ուշ թէ շուտ ստիպուած է հասկանալ, որ բանակցութիւնների սեղանին գէնքը չի գործելու, այլ՝ պատմաիրաւական հիմքերը եւ փաստերը:

Սեղանի շուրջ արդիական գէնքերը չեն «խօսում»: Ի դէպ, դրանք որոշիչ չեն նաեւ Արցախի ինքնիշխանագոյացումից հարցում, եւ պատերազմի հետեւանքով ոչ միայն չլուծուեց Արցախի հիմնահարցը, այլեւ աւելի խորացաւ: Ադրբեյջանի ու դաշնակից ուժերի միջոցով Արցախի նորանոր տարածքներ օկուպացնելու, կատարուած ռազմական յանցագործութիւնների հետեւանքով: Սպառազինուելուն զուգահեռ՝ Ադրբեյջանն իր բանակն ամբողջութեամբ տանում է Թուրքիայի գիւտու չեւ, ասել է թէ՝ ՆԱՏՕ-ի չափանիշների ներքոյ եւ վերջինիս հետ փորձում ձեւաւորել Թուրքիա-Վրաստան-Ադրբեյջան ռազմական համագործակցութեան վեկտորը: Բնականաբար, կրկին ՆԱՏՕ-ի ստանդարտների ներքոյ:

Յիշում անելով Թուրքիայի պաշտպանութեան նախարարութեանը՝ ադրբեյջանական լրատ-



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Յունուար 1-ին Կենսաթոշակներու Եւ Նուազագոյն Աշխատավարձի Բարձրացում

2023 թուականին Յունուար 1-ին պիտի ունենանք կենսաթոշակներու բարձրացում: Այս մասին կառավարութեան նիստի ընթացքին յայտնեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Մենք կ'ունենանք նաեւ նուազագոյն աշխատավարձի բարձրացում: Նախատեսուում է, որ նուազագոյն աշխատավարձը 68 հազար դրամից կը դառնայ 75 հազար դրամ», ըսաւ Փաշինեան:

Ան նշեց, որ ժողովրդագրական ծրագրերու ոլորտին մէջ ալ կայ կարեւոր փոփոխութիւն:

«Դուք գիտէք, որ մենք 2020 թուականին որոշում կայացրինք, որ գիւղական բնակավայրերում մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքի համար մայրերին տրամադրուած ենք նպաստ, այդ թւում՝ չաշխատողներին: Իսկ աշխատող մայրերին գիւղական բնակավայրերում կրկնակի մեծ նպաստ ենք տրամադրուած:

Հիմա մենք յանգել ենք նրան, որ մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը պիտի աւելացնենք: 28 հազար 600 դրամից պիտի դառնայ 30 հազար 700:

Մենք պէտք է բոլոր մայրերին մինչեւ 2 տարեկան երեխայի խնամք տանք, այսինքն՝ անկախ բնակավայրից, անկախ նրանից՝ աշխատող է թէ չաշխատող, իսկ գիւղական բնակավայրերում աշխատողներին շարունակելու ենք կրկնակի չափով այդ նպաստը վճարել: Դա նշանակուում է, որ նրանք Յունուարի 1-ից այդ նպաստը կը ստանան 61 հազար 400 դրամի չափով», ըսաւ Փաշինեան:

Սեդա Սաֆարեանը Սահմանադրական Դատարանի Դատաւորի Թեկնածու

Կառավարութիւնը Սահմանադրական դատարանի դատաւորի պաշտօնին առաջադրեց յայտնի փաստաբան, Մարտ 1-ի գործով տուժողի ներկայացուցիչ Սեդա Սաֆարեանի թեկնածութիւնը:

Սաֆարեան շնորհակալութիւն յայտնեց վստահութեան ու հաւատքի համար:

«Կարծում եմ, որ իմ անմիջական մասնակցութիւնը սահմանադրական արդարադատութեան իրականացմանը կը ստացուի, եւ դուք չէք զղջար՝ ինձ այդ բարձր պաշտօնին առաջադրելու համար», ըսաւ Սաֆարեան:

Նշելով, որ որոշումը քաղաքական էր՝ վարչապետ Նիկոլ Փաշինեան այդ տրամաբանական համարեց:

Ազգային ժողովը փակ-զաղտնի քուէարկութեամբ պիտի ընտրէ ՄԴ դատաւորը:

Դեկտեմբերին կ'աւարտի Սահմանադրական դատարանի երկու դատաւորներու՝ Աշոտ Խաչատրեանի եւ Արեւիկ Պետրոսեանի պաշտօնավարման ժամկէտը:



Փաստաբան Սեդա Սաֆարեան

եանի եւ Արեւիկ Պետրոսեանի պաշտօնավարման ժամկէտը:

Սահմանադրական դատարանի դատաւոր առաջադրուելու ցանկութիւն յայտնած է նաեւ արդարադատութեան նախկին նախարար Արտակ Զէյնալեանը:

ԱԺ-ն Իշխան Սաղաթելեանն Ու Վահէ Յակոբեանը Զեռացուց Փոխնախագահի Եւ Յանձնաժողովի Նախագահի Պաշտօններէն

ՀՀ Ազգային ժողովը ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր՝ Իշխան Սաղաթելեանը եւ կանչեց ԱԺ նախագահի տեղակալի պաշտօնէն, նաեւ դադարեցուց Վահէ Յակոբեանի լիազօրութիւնները՝ որպէս Տնտեսական հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ:

ԱԺ արտահերթ նիստին ինչպէս այդ հարցերու քննարկման, այնպէս ալ քուէարկութեան չեն մասնակցած երկու ընդդիմադիր խմբակցութիւններու պատգամաւորը:

ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթելեանն ԱԺ նախագահի տեղակալի պաշտօնէն ետ կանչելու վերաբերեալ եւ պատգամաւոր Վահէ Յակոբեանի՝ որպէս Տնտեսական հարցերու մշտական յանձնաժողովի նախագահի լիազօրութիւններու դադարեցման մասին որոշման նախագիծերու հարցով փակ, գաղտնի քուէարկութեան արդիւնքները յայտնեց Հաշուիչ Յանձնախումբի նախագահ

Նարեկ Պապայեանը, 107 պատգամաւորներէն քուէարկութեան մասնակցած է 66 պատգամաւոր, որոնք բոլորը երկու պարագաներուն ալ կողմ քուէարկած էին:

Նախագիծերը ներկայացուցած էր «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութիւնը:

ՔՊ խմբակցութեան պատգամաւոր Արուսեակ Զուլհալեանը, հիմնաւորելով ընդդիմադիրները պաշտօններէն հեռացնելու իրենց նախաձեռնութիւնը, մասնաւորապէս նշած էր, որ Իշխան Սաղաթելեանը ձախողած է կատարել ԱԺ փոխնախագահի իր լիազօրութիւնները: Իշխան Սաղաթելեանը 2022 թուականի Յունուար 17-ին Յունիս 29 ներառեալ, այսինքն՝ 2022 թուականի առաջին օրացոյցային կիսամեակի նիստերու թիւով 342 քուէարկութիւններէն ունեցած է 198 բացակայ: Վահէ Յակոբեան 342 քուէարկութիւններէն չէ մասնակցած 194-ին, ԱԺ հրաւիրուած 25 խորհուրդի նիստերէն բացակայած է 20 անգամ:

Աննա Վարդապետեան Ընտրուեցաւ ԶԶ Գլխաւոր Դատախազի Պաշտօնին

Ազգային ժողովը փակ-զաղտնի քուէարկութեամբ Աննա Վարդապետեանը ընտրեց ՀՀ գլխաւոր դատախազի պաշտօնին:

Վարդապետեանի թեկնածութիւնը առաջադրած էր «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութիւնը:

Քուէարկութեան յետոյ Հաշուիչ Յանձնախումբի նախագահ Նարեկ Պապայեան յայտնեց, որ Ազգային ժողովի 107 պատգամաւորներէն քուէարկութեան մասնակցած է 70 պատգամաւոր, որոնք բոլորն ալ կողմ քուէարկած էին:

Գլխաւոր դատախազի ընտրութեան հարցի քննարկման, քուէարկութեան ընդդիմադիր երկու խմբակցութիւններու պատգամաւորները չեն մասնակցած:

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնեան յայտնեց, որ գլխաւոր դատախազը իր պաշտօնը կը ստանձնէ ԱԺ նիստին տրուած երդմամբ, որ տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 15-ին:

Աննա Վարդապետեանը 2020 թուականի Մարտ 2-ին կը զբաղեցնէ ՀՀ վարչապետի օգնականի պաշտօնը:



Նորընտիր գլխաւոր դատախազ՝ Աննա Վարդապետեան

Նշենք, որ Սեպտեմբեր 15-ին կը լրանայ ՀՀ գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանի պաշտօնավարման ժամկէտը: Գլխաւոր դատախազը Ազգային ժողովի իրաւասու մշտական յանձնաժողովի առաջարկութեամբ կ'ընտրուի Ազգային ժողովին կողմէ՝ պատգամաւորներու ընդհանուր թիւի ձայներու առնուակն երեք հինգերորդով, վեց տարի ժամկէտով:

Արցախի ԱԱԾ-ն Դաւաճանութեան 5 Նոր Դէպք Բացայայտած Է

Արցախի Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) հաղորդած է պետական դաւաճանութեան 5 նոր դէպք բացայայտելու մասին:

Հաղորդագրութեան համաձայն՝ ծառայութիւնը բացայայտած է չէզոքացուցած է օտարերկրեայ յատուկ ծառայութիւններուն կողմէ Արցախի մէջ ստեղծուած գործակալական ցանցի գործունէութիւնը, որուն մէջ ներգրաւուած էր ինքն Պաշտպանութեան բանակի տարբեր ստորաբաժանումներուն մէջ ծառայութեան մէջ գտնուող անձեր, ինչպէս նաեւ կանխուած է ծուղակի մէջ յայտնուած Արցախի քանի մը քաղաքացիներու հետագայ հաւաքագրումը:

Դէպքին առթիւ Արցախի ԱԱԾ-ին մէջ յարուցուած քրէական գործի շրջանակին մէջ պարզուած է, որ Արցախի քաղաքացիներ, հանդիսանալով N զօրամասի ծառայողներ, «ընկերային ցանցերի միջոցով կապ են հաստատել հայ անձի տուեալներով գրանցուած օտարերկրեայ յատուկ ծառայութեանը»:

Տոլարի Արժեզրկման Կամ Դրամի Արժեւորման Զիմնական Պատճառի Մասին

Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ պիւստձէտային հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ Գէորգ Պապոյեանը Ֆէյսպուքի իր էջով գրառում կատարած ու նշած է տոլարի արժեզրկման կամ դրամի արժեւորման հիմնական պատճառը:

«2020 թ. Յունուար-Մայիսին դրամատների միջոցով ՀՀ ֆիզիքական անձանց կողմից արած փոխանցումների գուտ ներհոսքը (ներհոսքի եւ արտահոսքի տարբերութիւն) կազմել է 149 միլիոն տոլար:

2021 թ. Յունուար-Մայիսին դրամատների միջոցով ՀՀ ֆիզիքական անձանց կողմից արած փոխանցումների գուտ ներհոսքը կազմել է 281,5 միլիոն տոլար:

2022 թ. Յունուար-Մայիսին դրամատների միջոցով ՀՀ ֆիզիքական անձանց կողմից արած փոխանցումների գուտ ներհոսքը կազմել է 612,4 միլիոն տոլար:

Այսինքն՝ ՀՀ ֆիզիքական անձանց կողմից արած փոխանցումների գուտ ներհոսքը հաշուետու ժամանակահատուածում 2020 թ. համեմատ աւելացել է 4.1 անգամ, իսկ 2021 թ. համեմատ՝ 2.2 անգամ», գրած է Պապոյեան:

ԼՈՒՐԵՐ

ՀՀ Ներդրումային Միջավայրը Կրճայ Հետաքրքրել Գերմանական Առեւտուրին. Վարչապետ Փաշինեան Ընդունած Է Նախարար Շուլցեն



Նիկոլ Փաշինեան կ'ընդունի Գերմանիոյ տնտեսական համագործակցութեան եւ զարգացման նախարար Սուեմիա Շուլցէ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Գերմանիոյ Դաշնային Հանրապետութեան տնտեսական համագործակցութեան եւ զարգացման դաշնային նախարար Սուեմիա Շուլցէն եւ անոր գլխավորած պատուիրակութիւնը:

Վարչապետը ընդգծած է Հայաստան-Գերմանիա քաղաքական երկխօսութեան բարձր մակարդակը եւ կարեւորած է Գերմանիոյ կառավարական պատուիրակութեան այցը մեր երկիր: «Գերմանիան ԵՄ երկրների շարքում Հայաստանի խոշորագոյն առեւտրատնտեսական գործընկերն է, եւ մենք նաեւ բարձր ենք գնահատում Գերմանիայի օժանդակութիւնը Հայաստանի ժողովրդավարական օրակարգին, փորձի փոխանակումը: Շահագրգռուած ենք մեր արդիւնաւէտ համագործակցութեան շարունակականութեամբ եւ ընդլայնմամբ», նշած է Նիկոլ Փաշինեան:

Գերմանիոյ դաշնային նախարարը շնորհակալութիւն յայտնած է ընդունելութեան համար եւ ընդգծած, որ երկու երկիրներուն միջեւ ձեւաւորուած են սերտ յարաբերութիւններ, այդ շարքին՝ ԵՄ Արեւելեան Գործընկերութեան ծրագրի շրջանակին մէջ: Սուեմիա Շուլցէն Գերմանիոյ կառավարութեան պատրաստակամութիւնը յայտնած է՝ շարունակելու, զարգացնելու Հայաստանի հետ փոխշահաւէտ գործընկերութիւնը եւ համատեղ ծրագրերը:

Վարչապետ Փաշինեան Ընդունած Է ԱՄՆ Ժողովրդավարութեան Աջակցութեան Ազգային Հիմնադրամի Նախագահը

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է ամերիկեան արտաքին քաղաքականութեան փորձագէտ եւ ժողովրդավարութեան Աջակցութեան Ազգային Հիմնադրամի նախագահ Տէյմըն Ուիլսընը:

Վարչապետը ընդգծած է, որ ժողովրդավարութեան զարգացումն ու ամրապնդումը Հայաստանի կառավարութեան կարեւորագոյն առաջնահերթութիւններէն մէկն է եւ նշած է, որ Հայաստանի մէջ ժողովրդավարական բարեփոխումներ կ'իրականացուին շարք մը ոլորտներու մէջ: Այս ծիրին մէջ, Նիկոլ Փաշինեան կարեւորած է

Վարչապետը ընդգծած է, որ Հայաստանը յանձնառու է շարունակելու ժողովրդավարական ուղին եւ կարեւորած է Արեւելեան Գործընկերութեան ծրագիրը, որուն շրջանակին մէջ ՀՀ-ն յառաջընթաց արձանագրած է շարք մը չափանիշերով:

Զրուցակիցները արձանագրած են, որ Հայաստանն ու Գերմանիան ունին տարբեր ուղղութիւններով յարաբերութիւնները զարգացնելու ներուժ եւ այդ օրակարգը յառաջ մղելու կամք: Քննարկուած են գիւղատնտեսութեան, սնունդի անվտանգութեան, վերականգնող ուժանիւթի, կրթութեան, զբօսաշրջութեան, շրջակայ միջավայրի պահպանութեան եւ փոխադարձ հետաքրքրութիւններ կայացնող այլ ոլորտներու մէջ գործակցութեան խորացման հարցեր: Երկուստեք կարեւորուած են կանանց տնտեսական եւ հասարակական աշխուժութիւնը խթանող նախաձեռնութիւնները:

Վարչապետը տեղեկացուցած է, որ 2022 թուականի Յունուարէն սկսեալ Հայաստանի մէջ տնտեսական աշխուժութեան բարձր ցուցանիշ կ'արձանագրուի, եւ մեր երկրի ներդրումային միջավայրը, շարունակաբար բարելաւող պայմանները կրնան հետաքրքրական ըլլալ գերմանական առեւտուրին համար, ինչին Գերմանիոյ տնտեսական համագործակցութեան եւ զարգացման դաշնային նախարարը դրական արձագանգած է:

ԱՄՆ եւ միջազգային այլ գործընկերներու օժանդակութիւնը Հայաստանի մէջ ժողովրդավարական հիմնարկներու ամրապնդման գործին մէջ:

Տէյմըն Ուիլսըն նշած է ժողովրդավարութեան Աջակցութեան Ազգային Հիմնադրամի յանձնառուութիւնը՝ սերտօրէն համագործակցելու հայաստանեան տարբեր կառույցներու հետ ժողովրդավարութեան զարգացման ուղղութեամբ:

Զրուցակիցները միտքեր փոխանակած են փոխգործակցութեան հնարաւորութիւններու շուրջ:

Ռազմական Ոլորտին Մէջ Երեւանն Ու Տելիին Սկսած Են Փնտռել Յստակ Համագործակցութեան Ուղիներ



Արարատ Միրզոյեան եւ Հնդկաստանի Արտաքին գործերու Նախարարութեան քարտուղար Սանճայ Վերման

44-օրեայ պատերազմէն յետոյ նկատելիօրէն աշխուժացած հայ-հնդկական յարաբերութիւններու օրակարգին մէջ ռազմական համագործակցութեան հարցն է: Ընդ որում, ինչպէս յայտարարուեցաւ Երեւանի մէջ Հայաստանի ու Հնդկաստանի բարձրաստիճան ներկայացուցիչներու հանդիպման ընթացքին, պաշտպանութեան ոլորտին մէջ կողմերը հակուած են երկարաժամկէտ համագործակցութեան:

Արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան ընդունած է Հնդկաստանի Արտաքին գործերու Նախարարութեան Արեւմտեան ուղղութեան քարտուղար Սանճայ Վերմանը, որ ժամանած է՝ մասնակցելու հայ-հնդկական միջկառավարական յանձնաժողովի հերթական նիստին:

«Պաշտպանութեան ոլորտին մէջ սկսած ենք փնտռել յստակ համագործակցութեան ուղիներ: Այս ոլորտին մէջ երկարատեւ համագործակցութեան ուղիներ կը փնտռենք: Առեւտուրի ու տնտեսութեան բնագաւառին մէջ որո-

շակիացման գործընթաց մեկնարկել, ուր կրնանք յառաջ երթալ: Երկկողմ ներդրումներու պակաս կայ: Իմ, մեր կառավարութեան պարտականութիւնն է քաջալերել հնդկական արդիւնաբերութիւնը, գործարարները՝ Հայաստանի մէջ ներդրումներ կատարել, որովհետեւ հնարաւորութիւնները, ներուժ մեծ են», ըսաւ Սանճայ Վերման:

Թէ ռազմական ոլորտին մէջ ճշգրիտ ինչ համագործակցութեան մասին է խօսքը, հնդիկ պաշտօնեան չմանրամասնեց:

Ատրպէյճանի հետ պատերազմէն առաջ՝ 2020-ի Մարտին, հնդկական մամուլը գրեց, թէ Հայաստանի կառավարութիւնը Ռուսիոյ, Լեհաստանի եւ Հնդկաստանի ռազմաարդիւնաբերական ընկերութիւններէն ընտրած է վերջինները, եւ Տելիին Երեւանին պէտք է մատակարարէ 50 քիլոմէթր շառաւիղով հրետանիի արկերու եւ տարաբնոյթ հրթիռներու ուղղութիւնը, արագութիւնը որոշող նորագոյն չորս՝ Swath ռասարներ՝ 40 միլիոն տոլար ընդհանուր արժողութեամբ:

Արցախը Հայաստանին Կապող Առաջարկուող Նոր Ծանապարիղ Շատ Աւելի Անվտանգ Պիտի Ըլլայ. Նախագահ Արայիկ Յարութիւնեան

«Մենք ունեցել ենք մի քանի առաջարկութիւն կապուած Արցախը Հայաստանին կապող նոր ճանապարհի հետ՝ եւ Ատրպէյճանի կողմից, եւ Ռուսաստանի Դաշնութեան կողմից, բոլոր առաջարկութիւնները մերժուել են»: Այս մասին Արցախի խորհրդարանին մէջ յայտնեց նախագահ Արայիկ Յարութիւնեանը՝ պատասխանելով լրագրողներու հարցումներուն:

Ան նաեւ նշեց, որ ներկայիս առաջարկուող մայրուղին քանի մը անգամ քննարկուած է Անվտանգութեան Խորհուրդին մէջ, որուն մասնակցած են Ազգային ժողովին մէջ ներկայացուած բոլոր քաղաքական ուժերը:

«Մենք ընտրել ենք, մեր կարծիքով, լաւագոյն տարբերակը», նշեց Յարութիւնեանը՝ պարզաբանելով, որ ներկայիս տարբերակին վրայ ընտրութիւնը կանգ առած է անվտանգութեան տեսանկիւնէն:


«Շինարարութիւնը աւարտուելուց յետոյ, մենք հնարաւորութիւն ենք ունենալու մեր գնահատականը տալու դրա որակի եւ



Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան

անվտանգութեան առումով: Իմ կարծիքով՝ նոր ճանապարհը շատ աւելի անվտանգ է լինելու՝ բազմաթիւ անվտանգային խնդիրներ հաշուի առնելով», պարզաբանած է նախագահը՝ խոստանալով անվտանգութեան վերաբերող հարցերուն փակ ձեւաչափով անդրադառնալ:

Նախագահ Խաչատուրեան Ընդունած է Յայ Աւետարանական Եկեղեցւոյ Պատուիրակութիւնը



Հանրապետութեան նախագահ Խաչատուրեանի կ'ընդունի Յայ Աւետարանական Եկեղեցւոյ պատուիրակութիւնը

Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեան ընդունած է Յայ Աւետարանական Եկեղեցւոյ պատուիրակութիւնը: Նախագահը ողջունած է հիւրերը եւ բարձր գնահատած է կազմակերպութեան բազմաշերտ գործունէութիւնը բարեգործական եւ մարդասիրական ոլորտներուն մէջ: Պատուիրակները շնորհակալութիւն յայտնած են նախագահ

Խաչատուրեանին հիւրընկալութեան համար եւ ներկայացուցած են կազմակերպութեան կողմէ իրականացուող եւ յառաջիկային նախատեսուած ծրագրերը: Երկուստեք պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է համադրելու ջանքերը մարդասիրական եւ բարեգործական տարբեր խնդիրներու յաղթահարման ուղղութեամբ:

Գանատան Հարաւային Կովկասի Մէջ Առաջին Դեսպանութիւնը Կը բանայ Հայաստանի Մէջ

Գանատան Հայաստանի մէջ դեսպանութիւն կը բանայ գանատայի արտաքին գործերու նախարար Մեյլանի ժողովն իր երկրին այդ որոշումը կը համարէ հայկական ժողովրդավարութեան Գանատայի աջակցութեան աւելցման կարեւոր երաշխիք: «Սա թոյլ պիտի տայ աւելի ամուր կապեր հաստատելու մեր երկիրներուն միջեւ եւ պիտի աւելցնէ Գանատայի աջակցութիւնը հայկական ժողովրդավարութեան: Քանի որ կայունութիւն ու անվտանգութիւն ապահովող կանոնները կ'ենթարկուին մարտահրաշխանքներու, Գանատան պիտի աշխատի յանուն

համաշխարհային խաղաղութեան եւ ժողովրդավարութեան պաշտպանութեան», նշած է Գանատայի արտաքին գործերու նախարարը թուրքերէն իր գրառման մէջ: ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան ողջունած է բնակող դեսպան ունենալու Գանատայի որոշումը: «Սա աստիճանաբար զարգացող հայ-գանատական շարաբերութիւնների եւս մէկ հանգրուան է, որն էլ աւելի կ'ամրապնդի ընդհանուր արժէքների վրայ հիմնուած մեր երկկողմ համագործակցութիւնը», նշած է նախարար Միրզոյեանը:

ԱՄՆ Ներկայացուցիչներու Պալատի Շարունակուած էջ 1-էն

դեցութեամբ եւ անկէ բխող մարտահրաշխանքներով՝ բնակարանային, պարէնային անվտանգութեան, ջուրի եւ սանիտարական պայմաններու, առողջապահական եւ այլ մարդկային կարիքներու ոլորտներուն մէջ: Ի յաւելումն թուրքերից նախագահական պաշտպանութեան վարչութեան ապրանքներու վաճառքը արգիլելուն, օրինագիծը կը ներառէ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ Աջակցութեան վճիռի 907 Բանաձեւի մասին հատուած մը: Սենատի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի նախագահ Պոպ Մենենտէզը (Դեմոկրատ, Նիւ Ճըրսի), ինչպէս նաեւ Ներկայացուցիչներու Պալատի Հետախուզութեան Յանձնաժողովի նախագահ Ատամ Շիֆը (Դեմոկրատ, Գալիֆորնիա), երկուքն ալ իրենց խիստ մտահոգութիւնը յայտնած են 907 Բանաձեւի կասեցման վերաբերեալ, որ վարչակազմը կասեցուց անցեալ շաբաթ:

Յանձնաժողովի նախագահ Մենենտէզը յայտնեց, որ «անիմաստ է ըսել, որ ԱՄՆ-ի օգնութիւնն ու վերապատրաստումը չեն ազդած Հայաստանի հետ իր (Ատրպէյճանի) ռազմական հաւասարակշռութեան վրայ» եւ այնուհետեւ ընդգծած է, որ ինք «պիտի շարունակէ խստօրէն վերահսկել Ատրպէյճանին տրամադրուող որեւէ օգնութիւն եւ կ'ակնկալէ, որ Պետական Քարտուղարութիւնը գործէ լիարժէք թափանցիկութեամբ եւ տրամադրէ բոլոր անհրաժեշտ մանրամասները, որպէսզի Գոնկրէսը գնահատէ Պաքուին տրամադրուող որեւէ աջակցութիւն»: Յանձնաժողովի նախագահ Շիֆ մասամբ ըսած է, որ Ատրպէյճանին ռազմական աջակցութիւն տրամադրելը «կը հակասէ մեր երկրի հիմնական ժողովրդավարական արժէքներուն» եւ «կըրան Ալիեւի վարչակարգին հնարաւորութիւնն տալ՝ շարունակելու կամ աւելի ուժեղացնելու իր սազրիչ գործողութիւնները հայերուն դէմ»:

Կը Բնարկենք Ընդդիմութեան Եւ Նախագահի Լիազօրութիւններու Մեծացումը Սահմանադրութեամբ. Դաւիթ Յակոբեան

Սահմանադրութեան օրուան առթիւ ուղերձին մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեան համոզմունք յայտնած է, թէ կառավարման խորհրդարանական համակարգը պէտք է պահպանուի: Սահմանադրական Բարեփոխումներու Խորհուրդը ձեւաւորած է, որ մինչեւ տարեվերջ պէտք է ներկայացնէ հայեցակարգի նախագիծ: Խորհուրդը նաեւ մասնագիտական յանձնաժողով ընտրած է, որը համակարգող, իրաւաբան Դաւիթ Յակոբեան եւս կողմ է, որ խորհրդարանական համակարգը պահպանուի:



Իրաւաբան Դաւիթ Յակոբեան

«Նախնական քննարկումներ Խորհրդի անդամների եւ նաեւ յանձնաժողովի առանձին անդամների հետ ունեցել եմ եւ կարող եմ եւս փաստել, որ գերակշռող մօտեցումը խորհրդարանական կառավարման ձեւի պահպանումն է», ըսաւ ան:

Իսկ, օրինակ՝ իրենք շատ էին, կարծես թէ, դժգոհում, որ 44-օրեայ պատերազմի քննութիւնը պէտք է իրականացնի Պաշտպանութեան եւ Անվտանգութեան Հարցերի Յանձնաժողովը, այսինքն՝ հարցեր կան, որ մի գուցէ այդ քննիչ յանձնաժողովները մեխանիզմը փոխուի Սահմանադրութեան մէջ: Մենք ցանկանում ենք իրենց լսել եւ, բնականաբար, դեռ փորձելու ենք»:

«Օրինակ՝ մենք ակնատես եղանք, եւ շատ քննադատուեց, կարծես, նաեւ քննարկուեց, դիտարկուեց քաղաքական հասարակութեան կողմից օրինակ՝ դատաւորները, որ վերջերս եղան ընտրութիւններ, իշխանութիւնը կողմ, գերօ ձայնով ընտրեց, մի գուցէ պէտք է դիտարկել՝ մեծամասնութիւնն այնքան ձայն չունենայ, որպէսզի չկարողանայ միանձնեայ, առանց ընդդիմութեան ներգրանման մասնակցել իշխանութեան այլ թեւերի ձեւաւորմանը կամ կատարել նշանակումներ: Բնականաբար, այո՛, մենք ունենք հաւասարակշռման խնդիր, եւ հիմնական նպատակներից մէկը, որ աշխատում է յանձնաժողովը, իշխանութիւնների միջեւ այդ հաւասարակշռութիւնը վերականգնելն է որոշակի առումով», յաւելեց ան:

Նախագահ Արմէն Սարգսեան հրաժարական տուաւ՝ պատճառաբանելով սահմանադրութեամբ բաւարար լիազօրութիւններ չունենալը:

Դաւիթ Յակոբեան, այնուամենայնիւ, յառաջիկային պիտի փորձէ ընդդիմադիրներու հետ հանդիպում կազմակերպել. «Ընդդիմութիւնը ձեւաւորեց քննիչ յանձնաժողով, քանի որ ունէր այդ իրաւունքը մէկ քառորդով, բայց Սահմանադրութիւնն ասում է՝ թուաբանակը պէտք է հաստատուի Ազգային ժողովի որոշմամբ, այսինքն՝ մեծամասնութիւնը, եւ իրենց քննիչ յանձնաժողով, ըստ էութեան... Հէնց իրենց շահերից է բխում, եւ մենք օրինակ՝ նման հարցերը պէտք է շտկենք, որպէսզի փոքրամասնութեանը տրուելիք լծակները դառնան իրական եւ իրագործելի: Եւ ուզում ենք իրենք

«Նախագահը պէտք է ունենայ հնարաւորութիւն՝ կատարելու ուղղակի, կամ այդ տարբերակը կը ներկայացուի, նշանակումներ, օրինակ՝ Սահմանադրական Դատարանի դատաւոր, դիտարկում ենք նախագահին նաեւ, ինչու չէ, վեթոյի իրաւունք, այսինքն՝ ոչ միայն ունենայ հնարաւորութիւն՝ օրէնքը ուղարկել ՄԴ կամ առարկութիւններ եթէ կ'գտնուի է, ենթադրեմք, որ առկայ է հակասութիւն սահմանադրականութեան հետ... այլ նաեւ թէկուզ այլ նկատառումներով՝ քաղաքական, քանի որ նա առաջնորդում է համապետական, համագրային շահերով, նա գտնի, որ այս օրէնքում կայ նման խնդիր եւ ետ ուղարկի այդ օրէնքը խորհրդարան», ըսաւ Դաւիթ Յակոբեան:

Հայաստան Եւ Թուրքիա Որոշած Են

Չարունակուած էջ 1-էն Չաւուշօղլուն շնորհակալութիւն յայտնած է Աւստրիոյ եւ հարց բարձրացուցած, թէ ինչո՞ւ չաջորդ հանդիպումները չանցընել թուրքերից կամ Հայաստանի մէջ: Ան հաստատած է, որ թուրքիան Ատրպէյճանի հետ կը խորհրդակցի Հայաստանի հետ յարաբերութիւնները բնականոնացնելու իւրաքանչիւր փուլով: «Մենք կը փափաքինք, որ գործընթացը շարունակուի փուլ առ փուլ», ըսած է թուրքերից արտաքին գործերու նախարարը,

նշելով, որ միւս կողմէ Անգարան նաեւ կը պաշտպանէ հայ-ատրպէյճանական շարաբերութիւններու բնականոնացումը: Ատրպէյճանական լրատուամիջոցներու փոխանցմամբ՝ Չաւուշօղլուն խօսելով հայ-ատրպէյճանական շարաբերութիւնները բնականոնացնելու մասին, ըսած է, որ պէտք է բանալ «Չանգեզուրի միջանցքը», որ պէտք է ստեղծուի Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ համապայմանութիւններու հիման վրայ, ինչպէս նաեւ իրականացնել ճանապարհային փոխադրութեան այլ ծրագրեր:

Կարո Փայլան «Ընտրութիւնները Լուրջ Զեւեւանքներ Պիտի Ունենան»



ԻՇԽԱՆ ԷՐՏԻՆՉ

Փոքրամասնութեան համայնքներու պատկանող հիմնարկներու վարչութիւնները ճշդելու համար գործադրուելիք նոր կանոնագիրը 18 Յունիսին պետութեան պաշտօնաթերթին մէջ հրատարակուելով գործադրութեանց դրուած էր: Հիմնարկները թէեւ ուրախութեամբ դիմաւորեցին այդ ընթացքը, բայց ներկայացած կանոնագիրը չէ դիմազարուած հասարակութեան ակնկալութիւնները:

Ընտրատարածքներու բաժանումը եւ հիւանդանոցներու հոգաբարձութեան ընտրութիւններուն 2023-ի տարեվերջին յետաձգումը դժգոհութեան կարեւոր կէտերն են:

Հայ համայնքային վարիչները մտադիր են քննարկումներէ ետք առարկութիւն ներկայացնելու:

Ժողովուրդներու ժողովրդավարութեան կուսակցութեան Ամիրտայի պատգամաւոր Կարո Փայլան կը յայտնէ թէ ներկայացած կանոնագիրը պարտադրանք մըն է, որ պէտք է մերժուի: Փայլան «Այո»ին տուած յայտարարութիւնով նշեց թէ կանոնագիրը պահանջները նկատի ունենալով չէ պատրաստուած եւ այդ իսկ պատճառաւ ալ անպատեհութիւններ պիտի բերէ: «Սոյն կանոնագիրը պարտադրանք մըն է եւ անտեսած է փոքրամասնութիւններուն պահանջները: այդ առումով ալ պէտք է մերժուի: Սակայն ինը տարիէ աւելի է որ առկախուած ընտրութիւնները թէկուզ ներկայ հակաժողովրդավարական պայմաններուն մէջ անցկացնելու առիթը բնականաբար գոհունակութիւն պատճառած է: Սակայն պէտք է առարկել այս պարտադրանքին դէմ որպէսզի երկրի իշխանափոխութեան երթալու պարագային համայնքներու դժգոհութիւնը արձանագրուած ըլլայ»:

Ընտրութիւնները կարգաւորող նախորդ կանոնագիրը 2013 թուականին աւելի լաւ պատրաստուելու պատրուակով չեղեալ համարուած էր: Կարո Փայլան կը նշէ թէ փոքրամասնութիւններու հիմնական պահանջը աւելի արդար ընտրութիւններ անցկացնելն էր: Արդարեւ նախորդ ընտրութիւններու ընթացքին օրինական գանցառութիւններ նկատուած էին: Այս մասին հարցազրոյցով մը

Թուրքիոյ Խորհրդարանին դիմող Կարո Փայլանի համաձայն հիւանդանոցներու հոգաբարձութեան ընտրութիւնները յաջորդ տարուան յետաձգելը գայթակղութեան բնույթ ունի:

«Ցանկացած հիմնարկ այս նոր կանոնագրութիւնով ալ կրնայ ապօրէն ընտրութիւն կատարել: Ընտրութիւնը բոլորովին յանձնուած է Վաքըֆներու Ընդհանուր Տնօրէնութեան: Ուրեմն ցանկացած հիմնարկի վարչութիւն Ընդհանուր Տնօրէնութեան հետ համաձայնելով կրնայ իր Ընտրութեան Կարգադիր Ցանձնախումբը ճշդել, ընտրացանկերը եւ ընտրութեան տարածքը իրեն ձեռնտու կերպով դասակարգել: Այս երեւոյթը արդար եւ թափանցիկ ընտրութեան: Մինչ այդ հիւանդանոցի ընտրութիւններուն տարանջատումը կատարեալ գայթակղութիւն մըն է: Ի վերջոյ համայնք կոչուածը պատրիարքարանով, եկեղեցիներով, հիւանդանոցներով եւ դպրոցներով ամբողջութիւն մըն է: Տուեալ համայնքի կարիքները գոհացնելու համար հիմնուած հաստատութիւններէն մէկն ալ հիւանդանոցն է: Հիւանդանոցի հոգաբարձութեան ընտրութիւնը ամբողջին տարանջատելը լուրջ հետեւանքներ կրնայ ունենալ: Մանաւանդ ալ Սուրբ Փրկիչ Հիւանդանոցի հոգաբարձութեան ատենապետը ինքզինք համայնքի աշխարհիկ առաջնորդը ըլլալով կը ներկայացնէ: Հետեւաբար ընտրութեան գերծ մնացած մէկու մը համայնքի առաջնորդ համարուելը անընդունելի երեւոյթ մըն է: Այս բոլորին պատճառաւ պէտք է առարկել այս կանոնագրին: Անշուշտ որ կարեւոր է ընտրութիւններուն անցկացումը, բայց ապա աւելի լուրջ խնդիրներու հետ դէմ յանդիման պիտի մնանք: Վերջապէս Սուրբ Փրկիչ Հիւանդանոցին երկրի Առողջապահական Նախարարութեան կցուելուն դէմ ամբողջ համայնքը պէտք է բողոք բարձրացնէ: Ես թէեւ Թուրքիոյ Խորհրդարանի մէջ հայ երեսփոխան մըն եմ, բայց կը խորհիմ թէ այս տեսակի առարկուութիւնները պէտք է ուղղակի համայնքէն բարձրանայ: Ըստ իս կարելի է, թէ ընտրութիւնները կատարել եւ թէ այս կանոնագրի դէմ իրաւական գետնի վրայ պայքարել: Այս պայքարի առաջնորդը պէտք է նոյն ինքն

Հայ-Թրքական Սահմանի Բացման Գնդակը

Շարունակուած էջ 1-էն

ըր Անգարայի մօտ յաճախ կը բարձրացնէին Հայաստանի հետ սահմանը բանալու հարցը: Անոնք նաեւ կը քաջալերէին Երեւանը, որպէսզի փորձ մը եւս ընէ Անգարայի հետ յարաբերութիւնները նորմալացնելու ուղղութեամբ: Երկու երկիրները ընդառաջելով այդ կոչերուն՝ համաձայնեցան բանակցութիւններ վարել առանց նախապայմաններու, որ Հայաստանի միակ առաջարկն էր:

Հակառակ այդ սկզբունքին շուրջ հնչող երկուստեք հաւաստիացումներուն, Թուրք պաշտօնեաները անդադար կը խօսին Պաքուի պահանջը հանդիսացող «Ձանգեզուրի միջանցքի» մասին, իսկ հայկական կողմը կը պնդէ որ, օրակարգի վրայ նման հարց գոյութիւն չունի: Քննարկելի է միայն ճանապարհներու եւ հաղորդակցութեանց ալ միջոցներու երկուստեք բացումը:

Այս բոլորը նկատի առած է որ, հայկական կողմը սկսած էր իրապարակաւ կասկած յայտնել Անգարայի անկեղծութեան մասին: Թէ ինչո՞ւ Անգարա մէկ անգամն է «կակուղցուցած» է իր դիրքը, կը մնայ հարցական: Մէկ բան նշմարելի է որ, այդ որոշումը կը յաջորդէր ՆԱԹՕ-ի վերջին գազաթի ժողովին առընթեր տեղի ունեցած Պայտընէրտողան առանձին հանդիպումին:

Ի՞նչ կը վերաբերի բուն որոշումին, այն կիսաբայլ մըն է, որ չի կրնար ոգեւորութիւն յառաջացնել Հայաստանի կառավարական շրջանակներուն մօտ: Հայաստան-Թուրքիա ուղիղ օդային բեռնափոխադրումներու վերսկսումը մեծ ազդեցութիւն չի կրնար ունենալ Հայաստանի տնտեսութեան վրայ: Սահմանի մասնակի բացումը կրնայ որոշ չափով նպաստել որպէսզի օտարերկրացի գրօսաշրջիկները Թուրքիայէն ետք այցելել նաեւ Հայաստան: Իսկ այն սփիւռքահայերը, որոնք կը փափաքին Հայաստանէն մեկնիլ Արեւմտեան Հայաստան, կրնան այդ ուխտագնացութիւնը կատարել, առանց Վրաստան մուտք գործելու:

Թեւ կը խօսուի այս վերջին որոշումները կեանքի կոչելու կարճ ժամկետներու ընթացքին, սակայն մեկնելով անցեալի փորձէն քուրքիա դարձեալ կրնայ ձգձգել այդ քայլի իրականացումը, շարունակելով Հայաստանի հետ «գործընթացները համաձայնեցնել Ատրայէճանի հետ», որ դէմ է Հայ-թրքական որեւէ տեսակի տերձեցում: Հայաստան ցոյց տուած է իր բարի կամեցողութիւնը, սակայն պատրաստ չէ ոչ իրատեսական գիշումներու: Հետեւաբար, Հայաստան-Թուրքիա սահմանի բացման գնդակը կը շարունակէ մնալ թրքական կողմին Մօտ:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»

Հայաստան Պիտի Շարունակել Պահպանել

Շարունակուած էջ 1-էն

Իր իշխանութիւնն իրականացնում է ազատ ընտրութիւններին, հանրաքուէներին, ինչպէս նաեւ Սահմանադրութեամբ նախատեսուած պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտօնատար անձանց միջոցով», ըսաւ Վարչապետը իր խօսքին մէջ:

«Հպարտութեամբ պիտի արձանագրեմ, որ 2018 թուականի ոչ-բռնի, թաւշեայ, ժողովրդական յեղափոխութիւնից յետոյ Հայաստանը միջազգայնօրէն ճանաչուած է որպէս ժողովրդավարական պետութիւն: Իշխանութիւնը ժողովրդին պատկանելու նպատակն իրագործուած է, եւ մեր մեծագոյն խնդիրն է Հայաստանի Հանրապետութեան ժողովրդավարութիւնը վերածել երկրի անվ-

տանգութիւնն ապահովող տեւական գործօնի:

«Պիտի արձանագրեմ նաեւ, որ սահմանադրական միւս հիմնարար նպատակներն ամրագրելու ճանապարհին մեծ աշխատանք ունենք անելու, եւ մեր կառավարութեան կողմից իրականացուող բարեփոխումներն ուղղուած են հենց այդ նպատակներին:

«Ամուր իրաւակարգը, անկախ դատական համակարգը, օրինականութեան մեխանիզմները պիտի դառնան նաեւ մարդու արժանապատուութեան պաշտպանութեան յուսալի երաշխիքներ՝ առանց սահմանափակելու եւ վնասելու ժողովրդավարական արժէքները, եւ այս հարցի լուծումը մեր օրակարգի առաջնահերթութիւնների շարքում է», շեշտեց Փաշինեան իր խօսքին մէջ:

Հիմնարկները ըլլալն, նոյն ինքն հիւանդանոցի հոգաբարձութիւնը: Մեր աւանդութիւններուն հակասող պատրիարքական ընտրութիւն մը կատարեցինք եւ այժմ նոյն մտահոգութիւններով նոր սխալ մը գործելու, այսինքն պարտադրուածը իւրացնելու վտանգի մը հետ դէմ յանդիման ենք»:

Երեսփոխան Կարո Փայլան նաեւ նշեց թէ սոյն կանոնագրի պատրաստութեան մէջ Ներքին Գործոց Նախարարութիւնը կարեւոր դերակատարութիւն ունեցած է: Բոլորովին անիմաստ

է այս երեւոյթը, քանի որ ազգային կամ կրօնական փոքրամասնութիւնները երկրի անվտանգութեան վերաբերեալ խնդիր մը չեն համարուիր: «Վաքըֆներու Ընդհանուր Տնօրէնութիւնը ենթակայ է Մշակութի եւ Զբօսաշրջութեան Նախարարութեան: Սակայն կանոնագրի պատրաստութեան մէջ այդ նախարարութեան ազդեցութիւնը չէ եղած: Սոյն պարտադրանքը կը հակասէ նաեւ միջազգային համաձայնութիւններու» ըսած է Կարո Փայլան:

«ԱԿՕՍ»

ԷՋԵՐ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

ԿԱՐՆՈՅ ԵՒ ԳՈՒՄ ԳԱՓՈՒԻ ՑՈՅՑԵՐԸ



ԿԱՐՆՈՅ (ԷՐԶՐՈՒՄԻ) ՑՈՅՑԸ 1890 ՅՈՒՆԻՍ 18-ԻՆ

Թրքական կառավարութիւնը կասկածելով թէ Կարնոյ հայոց եկեղեցիին մէջ հայ յեղափոխականները գէնքի պահեստ ունին, կ'որոշէ խուզարկութեան ենթարկել եկեղեցին եւ շրջակայքը:

Այս լուրը շատ ծանր տպաւորութիւն կը թողու ամբողջ հայութեան վրայ: Մասնաւորապէս՝ Հնչակեան գաղափարներով անուած երիտասարդութիւնը կը բորբոքէ: 1890 Յունիս 18-ի առտու կանուխ ժողովուրդը կը խուժէ եկեղեցիին բակը, արգիլելու համար ծրագրուած խուզարկութիւնը: Երիտասարդներէն ոմանք կը գինուին ատրճանակներով՝ դեկավար ունեանալով Յակոբ Իչգալացեանը, որ Պոլիս երթալ-գալով Հնչակեան արձանագրուած էր Աչրգալաշեանի ձեռքով:

Օտտ 30 ոստիկաններ կը խուժեն եկեղեցիին բակը եւ կը պատրաստուին եկեղեցի մտնել: Հայ ներկայացուցիչներ կը միջամտեն ոստիկանապետին մօտ եւ կ'աշխատին ետ քաշել տալ ոստիկանները: Բանակցութիւնները տակաւին չվերջացած հայ երիտասարդներէն մէկը ոստիկանէն ձերբագրուելու համար ատրճանակը կը պարպէ օդին մէջ: Ատրճանակը պայթիւնը պատճառ կ'ըլլայ որ սկսի հրացանաձգութիւն նաեւ ոստիկաններու կողմէ: Կուրը կը սաստկանայ երկուստեք: Այս ընդհարման հետեւանքով քսանի չափ հայեր կը սպաննուին ու կը վիրաւորուին եւ մէկ ոստիկան կը սպաննուի: Այս ընդհարումը չի խանգարեր սակայն ծրագրուած խուզարկութիւնը:

Ոստիկանները վայրագաբար կը խուժեն եկեղեցիէն ներս եւ ամէն անկիւն կը սկսին փնտռուքի, առանց որեւէ արդիւնքի: Անկէ ետք կառավարութիւնը կը սկսի ձերբակալութիւններու: Դպրոցի տեսուչը՝ Գ. Չիլինկիրեան կը փախչի Կովկաս՝ իսկ ցոյցը կազմակերպող Հնչակեանները կը կորսնցնեն իրենց հետքերը:

Ցոյցի նախօրեակին այն ընդհանուր կարծիքը կը տիրէր, թէ եւրոպական դիւանագէտները շատ մեծ կարեւորութիւն պիտի տալին անոր եւ առիթէն օգտուելով նոր միջամտութիւններով ճնշում պիտի բանեցնէին Բ. Դրան վրայ, իրագործելու համար բազմիցս խոստացուած բարենորոգումները՝ հայկական նահանգներուն մէջ: Այս կարծիքը փարատեցաւ ցոյցէն անմիջապէս ետք, երբ օտար հիւպատոսները շատ անտարբեր գտնուեցան եւ միայն բաւականացան պաշտօնական տեղեկագիրներով իմացնել իրենց կառավարութեանց՝ տեղի ունեցած ընդհարումի մասին:

Ծայր աստիճան բարոյաւրջում մը նկատուեցաւ հայկական շրջանակներու մէջ՝ ի տես Քրիստոնեայ պետութեանց այս անտարբերութեան: Հայութիւնը ինքզինք բոլորովին լքուած զգաց: Արդարեւ, մինչ այդ՝ նման քայլ թուրք կառավարութեան կողմէ տակաւին

չէր առնուած, որովհետեւ հայ եկեղեցին եւ առաջնորդարանը անձեռնմխելի մնացած էին: Հնչակեան Կեդրոնը հանգամանօրէն կը քննէ կացութիւնը եւ այն եզրակացութեան կը յանգի թէ՛ անհրաժեշտ է նոր եւ աւելի կազմակերպուած ցոյցով մը պատասխանել թուրք կառավարութեան եւ բարձրացնել հայութեան թուլցած բարոյական մանաւանդ յեղափոխական երիտասարդութեան մօտ:

Տրապիզոնի Կեդրոնական Վարչութիւնը կ'որոշէ ցոյցը կազմակերպել ուղղակի Պոլսոյ մէջ, օտար դիւանագէտներու աչքին առջեւ:

Այս նպատակին համար խանազատ 1890-ի վերջերը Պոլիս կ'անցնի:

Հոն կը հանդիպի Գ. Կաֆեանին, Յարութիւն Ճանկիւլեանին, Մուրատ Պօյաճեանին եւ ուրիշներուն, որոնք խանդավառութեամբ կ'ընդունին Կեդրոնի որոշումը, մանաւանդ որ Պոլսոյ Վարիչ Մարմինն ալ նման ցոյց մը կազմակերպելու մտադրութիւն ունէր: Յուլիս 12-ին, Հինգշաբթի, կը հաւաքուին Մուրատ, Տամատեան, Ճանկիւլեան, Աչրգալաշեան, Գլըճեան, Գազանճեան, Վարդանեան եւ կ'որոշեն ցոյցը ընել խաղաղ միջոցներով:

Պոլսոյ Հնչակեան Վարիչ Մարմինը այնուհետեւ կը սկսի ցոյցի տենդագին պատրաստութեան:

Խանազատին եւ Կաֆեանին պաշտօն կը տրուի այցելել բոլոր այն լայնածաւալ խաները, ուր գաւառացի պանդուխտները հայրենակցական համախմբումներով կը բնակէին: Հոն՝ Խանազատ հանգամանօրէն կը բացատրէ տեղի ունենալիք ցոյցին կարեւորութիւնը, կը խանդավառէ զանգուածը ՅԱՆԿԱԼԻ ՕՐՈՒԱՆ համար, որ պիտի յայտարարուէր վերջին պահում:

ԳՈՒՄ ԳԱՓՈՒԻ ՑՈՅՑԸ 1890 ՅՈՒՆԻՍ 15-ԻՆ




1890 Յուլիս 12-ին տեղի կ'ունենայ ցոյցին յատկացուած ժողովը: Հոն կը ճշդուի ցոյցին նպատակը, որ էր.

ա. Բողոքել Կարնոյ խուզարկութեան եւ կատարուած խժեթութիւններուն դէմ:

բ. Բարձրացնել գաւառի հայութեան բարոյականը:

գ. Հայոց հարստահարութիւններուն հանդէպ անտարբեր եւրոպական դեսպաններու ուշադրութիւնը հրաւիրել Հայկական Հարցի



վերաբերմամբ:

դ. Հնչակեան կուսակցութեան ՊԱՀԱՆՁԱԳԻՐը ներկայացնել Սուլթանին՝ ցնցիչ ցոյցով մը: Ցոյցը տեղի պիտի ունենար Գուճ Գափուրի եւ Մայր Եկեղեցոյ Պատրիարքարանի միջեւ, Յուլիս 15-ին, Գուրպան Պայրամի առաջին օրը: Ցոյցը պիտի ըլլար խաղաղ կերպով: Կուսակցութեան Պահանջագիրը պիտի ներկայացուէր Սուլթանին՝ Աչրգեան Պատրիարքին միջոցով:

Ցոյցը պիտի դեկավարուէր երկու անձերու կողմէ, որոնցմէ մին՝ Պատարագը ընդմիջելով, Պահանջագիրը պիտի կարդար եկեղեցիի բեմէն, իսկ միւսը՝ Պատրիարքը առնելով պալատ պիտի երթար եւ Պահանջագիրը ներկայացունէր Սուլթանին՝ իբր Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչ:

Բուն դեկավար երկու ընկերները պիտի ընտրուէին վիճակով: Անոնցմէ մին պիտի ըլլար Պահանջագիրը կարդացողը, իսկ միւսը՝ Սուլթանին ներկայացողը: Յայտնի բան է որ երկուքին ալ մահ կը սպասէր:

Կիրակի առտու կանուխին Պոլսոյ ծայրերին եւ հեռավոր անկիւններէն խուռն բազմութիւն մը կը սկսի խուժել Գուճ Գափուրի Մայր Եկեղեցին:

Նախապէս որոշուած էր Պահանջագիրը կարդալ «Առաքելոց Սրբոց»-ի ատեն, բայց վերջին վայրկեանին այդ որոշումը կը փոխեն, կասկածելով որ մեկնող լրտեսները կը փորձեն նոր ոստիկաններ բերել տալ եւ ծրագիրը խանգարել: Թէեւ ժողովի որոշումին դէմ՝ բայց երկուքը (Մուրատ եւ Ճանկիւլեան) պատասխանատուութիւնը իրենց վրայ վերցնելով՝ կ'որոշեն շտապել:

Երբ Պատրիարքը դպիրներով Ատեան կ'երթայ «Փառք ի բարձունս» սկսելու, Ճանկիւլեան Մուրատին կ'առաջարկէ դերերնին փոխել եւ ինք Պահանջագիրը կարդայ, իսկ Մուրատ՝ Պատրիարքը առնէ պալատ տանելու: Մուրատ կը համաձայնի: Հագիւ դպիրները կը սկսին «Փառք»-ը, Ճանկիւլեան բարձրաձայն կը սկսի կարդալ Պահանջագիրը, որուն կը ձայնակցին ամէն կողմէ խմբապետները: Ահա այդ Պահանջագիրէն բաժին մը.

Հարագատ ժողովուրդ, Մենք, հայերս, ունինք Երկիր մը, հայրենիք մը, որուն մեր նախահայրերը մկրտած են Հայաս-

տան անունով, որուն ալ օժիտ է դարձած թշուառ ածականը: Քեզ քաջ ծանօթ է այդ երկիրը, վասնզի դուն անդին եկած ես հոս, ուր կ'ապրիս պանդուխտ:

- Այդ երկրին տնտեսական, հասարակական եւ քաղաքական վիճակն հիմա կա'մ արիւն, կա'մ արցունք կը հոսեցնէ ամէն մէկ հայու սրտին: Անտանելի հարստահարութիւնք, անիրաւ ձերբակալումներ, ապօրէն դատապարտութիւնն ու անխիղճ աքսորանք այնտեղ անպակաս են: Սոցիալիստ արարքներու դէմ ժողովրդի բողոքող արդար ձայնը անլսելի կը մնայ միշտ եւ մինչեւ իսկ կատաղի գորբերով անխնայ կը կոտորուի, սուխարբար ու գնդակահար կ'իյնայ, ինչպէս Վանայ, Մշոյ, այլ տեղերու եւ վերջերս Կարնոյ մեծ դէպքին մէջ: Մեր հազարաւոր վիժող քոյրերու աղաղակը եւ մեր նահատակուող եղբայրներու տակաւին տաք արիւնը մինչ այժմ անուանադիր մնացած է:

Ժողովուրդ, Քո անթիւ, անհամար թշուառութիւններու բուն պատճառը, իսկական արմատը քո փորձը քաղցած ըլլալն է. կ'ուզեմ ըսել թե՛ քո տնտեսական սնանկացեալ եւ քայքայուած վիճակն է: Հայրենիքիդ հողը քուկդ չէ ամենեւին: Դուն կը վարես, կը ցանես, ոչխարներու հօտը կ'արածեցնես, կալուածատէր հարուստներու, պէյերու, տէրութեան համար: Հողերը՝ որոնց համար կը վճարես ահապէն տուրքեր, որով իրաւունք կ'առնես մշակելու: Բայց կը մշակես, չարաչար կ'աշխատիս եւ առած արդիւնքն ալ կրկին քուկդ չէ, եւ ոչ հարկերին հինգն անգամ: Քո տնտեսական դրութիւնդ է, որ յեղափոխուելու անհրաժեշտ է: Տնտեսական կացութիւնդ եւ յարաբերութիւնները երկրին մէջ պէտք կատարելապէս կերպարանափոխուին եւ կանոնաւորուին քո պահանջներուն համեմատ:

- Ինչպէս տեսնում եմ բալես, դու յուսահատուողներից չես, դու կը հասնես քո նպատակին, միայն թէ ինձ չմոռանաս հրաւիրել քո առաջին համերգին:

Բ. ԻՆՍՏԻՏՈՒՏ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒՄ ԳՈՐԾ

...Մօտենում էր 1955-ի գարունը: Հիանալի տեսարան էր բացուել Պուշկինի այգում: Աջ ու ձախ աշխատում էին բանուորները, կտրարում, ձեւի էին բերում ծառերը Առաջուայ նման, արդէն ոչ շատ յաճախ, ընկերներով հաւաքուում էինք մեր այգում: Մեր խմբի Զաւէնն արդէն համալսարանի երկրորդ կուրսում էր սովորում: Լիլիթը իններորդ դասարանն էր աւարտելու: Ժիրիկը դիմելու էր Համալսարան: Իմ վիճակն էր անորոշ: Ինքնակամ հեռացել էի գործարանից: Լաւ էր, որ գործ «չսարքեցին» ինձ վրայ: Հաւանաբար բաւարարուեցին այդ ամսուայ աշխատավարձը չվճարելով:

Իմ վիճակն էր անորոշ: Ահրաժեշտ էր պարապել գէթ Համալսարան ընդունուելու համար, որպէսզի բանակ չգնամ: Սարսափելի էր մտածել բանակ գնալու մասին: Երեք տարի՝ վասն ոչինչի կորցնելն ինձ համար չէր: Ես պարտաւոր էի

որոշում կայացնել:

Այսպէս կամ այնպէս, սրտիս ամէնամօտ մասնագիտութիւնը ժուռնալիստ, լրագրող դառնալն էր Հայրիկս, թէեւ շատ մտերիմ բարեկամներ ունէր ինձ օգնելու համար, սակայն նա այն մարդը չէր, որպէսզի ինչ որ մէկին խնդրէր ինձ օգնել ընդունուելութեան քննութիւնների ժամանակ: Մայրս խառնուեց գործին ու մի օր դիմեց հայրիկիս:

- Յակոբ, ինչո՞ւ չես գբադուում Հենրիկի հարցով, այդքան ընկերներ ունես Համալսարանում, վստահ եմ, քննական յանձնաժողովի մէջ էլ ընկերներ կան:

- Ունեմ, այո, ունեմ վէրժին, սակայն անիմաստ է Հենրիկին օգնելը, նա համալսարամ էլ ընդունուի, միեւնոյնն է՝ չի սովորելու: Նրա ուղեղը միայն երաժշտութեամբ է լցուած, ճիշդ չէ՞մ ասում տղաս, - շրջուելով իմ կողմը աւելացրեց իմ աննման հայրիկը:

- Ի՞նչ ասեմ հայրիկ, ինչպէս միշտ՝ դուք էք ճիշդ, - կատակի տալով փորձեցի կասեցնել երկխոսութիւնը:

- Անշուշտ ճիշդ եմ:

- Հայրիկ, այո, սիրում եմ գրականութիւնը, գիտես, յօդուածներ էլ եմ գրում, տպագրում, հոնորար ստանում, բայց, ինչպէս քիչ առաջ ասացի՝ ուղեղս երաժշտութեամբ է լցուած: Իսկապէս ես պէտք է մի տեղ սովորեմ, որպէսզի բանակ չտաննես:

- Լսիր Յակոբ, - ասաց մայրս, - դու Արսէնի համար ամէն ինչ արեցիր: Ընդունել տուի Մանկավարժական ինստիտուտ, իսկ հիմա էլ՝ ամէն ինչ անում ես, որպէսզի աշխատանքի տեղաւորես Մատենադարանում: Ինչո՞ւ չես օգնում Հենրիկին:

- Այլեւս չեմ ուզում խօսել այդ նիւթի շուրջ վէրժին: Հենրիկն ու Արսէնը տարբեր են: Հենրիկը գիտի ինչպէս իր գործերը կարգաւորել: Ես վստահ եմ, նա սխալ բան չի անի:

Հագիւ մէկ-երկու շաբաթ անց, մեր տուն եկաւ մի անծանօթ տղամարդ, որը շատ պատահականօրէն ծանօթացել էր մայրիկիս հետ՝ մեր հարեւան վահարամենց տանը:

- Համեցէք, համեցէք ընկեր Սուքիասեան, - դրան գանգը լսելուց ու դուռը բացելուց յետոյ մայրս ներս հրաւիրեց անծանօթ տղամարդուն:

- Խնդրեմ, նստեցէք, - Հենրիկ գնաց պապային կանչիր, - ասաց մայրս:

Հայրիկս նկատելի դժկամութեամբ մտաւ սենեակ: Հաւանաբար մայրս նախապէս ասել էր այս անծանօթ այցելուի մասին:

- Լսում ենք ձեզ ընկեր Սուքիասեան, Հենրիկը տեղեակ չէ թէ դուք ով էք եւ թէ ինչու էք այստեղ, խնդրեմ ասացէք թէ ինչումն է հարցը, - ասաց հայրիկս:

- Ի՞նչ ասեմ, դուք, ինչ է, տեղեակ չէ՞ք պահել ձեր որդուն թէ ինչի համար եմ եկել:

- Ո՛չ, չենք ասել, որովհետեւ իմ սկզբունքներին դէմ է այն ամէնը, ինչ որ դուք կնոջս հետ պատրաստուում էք իրականացնել: - կծու, խայթող երանգ դնելով ասածի մէջ՝ ասաց հայրս:

- Դէ լա՛ւ, ստիպուած եմ կրկնել այն ամէնը, ինչ որ ասել եմ ձեր տիկնոջը: Հենրիկ, ես աշխատում եմ Գիւղատնտեսալան ինստիտուտում եւ հնարաւորութիւն ունեմ օգնել քեզ, որպէսզի դու ինստիտուտ ընդունուես. ի՞նչ էս ասում:

- Բայց ես..., ես ի՞նչ պիտի անեմ ձեր ինստիտուտում, ես չեմ սիրում ձեր ինստիտուտը: Եւ յետոյ, ես չափազանց հեռու եմ գիւղատնտեսութիւնից:

- Ինչ անել չ'անելու մասին չէ խօսքը, դու պիտի բարձրագոյն կրթութիւն ստանաս տղաս, բացի դրանից դու կ'ազատուես բանակից, - միջամտեց մայրս:

- Բայց ես չեմ կարող քննութիւնները յանձնել, որքան որ գիտեմ քննութիւն եմ տալու քիմիայից եւ ֆիզիկայից: Ես այդ առարկաներից ոչինչ չգիտեմ:

- Դու մի անհանգստանայ, - ասում է Սուքիասեանը, - ես ամէն ինչ կը կարգադրեմ, քննող դասախօսին քո անունը կը տաս՝ եւ վերջ: Նա անհրաժեշտ նիշը կը դնի գրքոյկիդ մէջ, դու միայն հանգիստ կը պահես քեզ, - բաւականին համոզիչ տոնով ասաց նա:

Դեռ ընդհանուր յայտարարի չ'եկած, հայրիկս թողեց մեզ ու գնաց իր աշխատասենեակը:

Նման կարգի խօսակցութիւններն ու գործարքները խորթ էին նրա բնաւորութեանն ու խառնուածքին:

Սուքիասեանն ու մայրս ընդհանուր յայտարարի եկան: Մինչեւ իմ ինստիտուտ ընդունուելը մեզ որեւէ պարտաւորութեան տակ չէր դնում պարոնը:

- Հենրիկի ինստիտուտ ընդունուելուց յետոյ, ես կը գամ եւ կը վերցնեմ ինձ հասանելիք գումարը, - ասաց Սուքիասեանը եւ անմիջապէս հեռացաւ մեր տնից:

Առաջին քննութիւնը քիմիա առարկայից էր:

- Գրքոյքը դիր սեղանին եւ վերցրու հարցաթերթիկդ, - ասաց քննող դասախօսը:

Զարմանքից անակնկալի եկայ ու անմիջապէս հասկացայ որ, ինչ որ մի բան իր տեղում չէ: Ես չզգիտէի ինչ անել: Մէկ վայրկեանում հաւաքեցի ինձ ու կամացուկ, որպէսզի շուրջինները չլսեն, ասացի.

- Ես հենրիկն եմ, Հենրիկ Անասեանը, ձեզ... ձեզ...

- Տղայ ջան, բնաւ կարեւոր չէ թէ դու ով ես, հարցաթերթիկդ վերցրու եւ նստիր: Պատրաստուիր պատասխանելու, - խորհրդաւոր, երկիմաստ ժպիտը դէմքին՝ ասաց դասախօսը:

Ես ողորմելի վիճակում էի, ակամայ, ոտքի վրայ բացեցի քննաթերթիկը, որի մէջ եղած երեք հարցերից եւ ոչ մէկը ինձ ծանօթ չէր: Ի՞նչ անել, յատակ էր, որ ես անբաւարար էի ստանալու: Մէկ վայրկեանում որոշեցի անելիքս: Սեղանի վրայից վերցրի գրքոյկս ու արագօրէն, գրեթէ վազելով դուրս թռայ քննասենեակից: Հանգիստ գտայ ինստիտուտին յարակից փոքր այգում, Յունան Աւետիսեանի արձանի մօտ տեղադրուած նստարանին:

Ընդունուելութեան առաջին իսկ քննութիւնից պարզ դարձաւ, որ մենք գործ ունենք խաբեբայ, պատահականութեան վրայ յոյս դնելով միամիտ մարդկանցից դրամ կորզելու փաստի հետ:

Սուքիասեանը երեւաց յաջորդ օրը՝ իմանալու համար թէ ինչպէս եմ «յանձնել» քննութիւնը: Երբ իմացաւ եղելութիւնը՝ առանց բացատրութիւն տալու, բացառապէս կերպով փախաւ մեր տանից: Յստակ էր, որ նա յոյսը դրել էր բախտի վրայ: Եթէ ինձ յաջողուէր ինստիտուտ ընդունուել՝ նա իրեն էր

Հարիւրամեակ Ձմիւռնիոյ Աղետին 1922-2022

Ս. Ստեփաննոս Մայր Եկեղեցիին Վախճանը Ղեւոնդ Եպիսկոպոս Դուրեանի Օրագիրէն

«Ձմիւռնիոյ հայոց Ս. Ստեփաննոս տաճարը իր հսկայ եւ հոյակապ կառուցուածքով, իր միակտուր սիւներով, իր գեղակերտ գմբէթով ճարտարապետական գլուխ գործոց մըն էր: Տաճարը շրջապատուած էր եկեղեցապատկան շէնքերով եւ ամրաշէն պատերով»

ՂԵՒՈՆԴ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ, Առաջնորդ

ԴՈԿՏ. ՉԱԻՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Յոյն եւ Թուրք Հակամարտութիւն

1915-ի Յեղասպանութեան ատեն Ձմիւռնիա եւ շրջանի հայութիւնը գերծ մնաց ընդհանուր կոտորածներէ շնորհիւ քաղաքի եկեղեցական եւ ազգային կեդրոնական վարչութեանց զգուշ եւ խոհեմ քաղաքականութեան գլխաւորութեամբ թեմակալ Առաջնորդ Մատթէոս Եպիսկոպոս Ինճէեանի: Կացութիւնը սակայն տարբեր եղաւ եւ շատ ողբերգական 1919-1922-ի յոյն ընդդէմ թուրք պատերազմէն ետք: 1922-ի գարնան Եւրոպայի դաշնակից տէրութիւնները ջանացին հաշտութիւն գոյացնել յոյներու եւ թուրքերու միջեւ, սակայն յոյներն որ բարդութիւն չարուցին Ձմիւռնիոյ շրջանը ինքնավար հռչակելով եւ Իոնիոյ բնակչութեան պաշտպանութեան նախաձեռնելով:

Այդ նպատակով յոյն պետութիւնը 25,000 զինուոր ցամաք հանեց Ռոտոսթոյի մէջ, եւ յետոյ արեւելեան թուրքիոյ մէջ կեդրոնացուց 42,000 զօրք դէպի Կ. Պոլիս յառաջանալու միտքով: Այս վտանգաւոր իրավիճակէն օգտուելով, Մուսթաֆա Քեմալ 1922 Օգոստոս 25-ին յարձակեցաւ Աֆիոն Գարահիսարի վրայ եւ պարտութեան մատնեց յոյները՝ յառաջանալով դէպի Ձմիւռնիա: Երկու շաբաթ ետք, Սեպտեմբեր 9-ին, դաշնակից պետութեանց՝ անգլիական, ֆրանսական, իտալական եւ ամերիկեան զրահաւորները արդէն խարսխեցին Ձմիւռնիոյ նաւահանգիստը, մինչ յունական վերջին զրահաւորը նոյն առաւօտ արդէն փախուստ տուած էր պարտութեան մատնուելէ ետք թուրքիոյ հետ ներքին կռիւներու ընթացքին:

Քրիստոնեայ Տարրը

Ձմիւռնիոյ քրիստոնեայ տարրը իր յոյսը դրած էր այլեւս եւրոպական եւ ամերիկեան տէրութեանց վրայ, զգալով քեմալական թուրքերու վերահաս վտանգը: Օգոստոս 26-ին յոյն բանակը խորտակուեցաւ Աֆիոն Գարահիսարի մօտ, Ձմիւռնիայէն 200 մղոն արեւելք, իսկ Սեպտեմբեր 1-ին յոյներ լքեցին իրենց դիրքերը քեմալական զօրքերու յառաջաման դիմաց: Նոյն օր վիրաւոր յոյն զինուորներ Ձմիւռնիա հասան իրենց դէպի Յունաստան փախուստի ճամբուն վրայ թշուառ վիճակի մէջ: Մինչեւ Սեպտեմբեր 5 փախստականները թիւը օրական 300,000-ի կը հասնէր, որոնք իրենց երախաներով եւ գոյքերով կ'ապաստանէին եկեղեցիներու եւ դպրոցներու բակերը՝ սպասելով յունական նաւերուն:

Յունաց եւ Հայոց Ահաւոր Ձարդը

Այս բոլորին յաջորդեց Ձմիւռնիոյ 1922 թուի ահաւոր ջարդը երբ քաղաքը թալանի եւ հրդեհի մատնուեցաւ: Բազմահազար յոյներու կողքին նաեւ բարգաւաճ հայեր կ'ապրէին իրենց եկեղեցիներով ու դպրոցներով թեմակալ Առաջնորդ Ղեւոնդ Եպիս-

կոպոս Դուրեանի եւ հոգեւորականութեան հոգածութեան ներքեւ: Շատեր խուճապահար ստիպուեցան փախչիլ դէպի Յունաստան: Այդ շրջանին Ձմիւռնիոյ մէջ կար 15,000 հայութիւն, եւ շրջակայքն ալ՝ 10,000, օրուան Առաջնորդին որ նախկին Առաջնորդն էր Պուլկարիոյ թեմին եւ յետագային նահատակ Առաջնորդը Ամերիկահայ թեմին, որ իր ականատեսի վկայութիւնները օրագրի ձեւով պահած էր ու յետոյ լոյս տեսած Երուսաղէմի 1982 թուի «Միոն» ամսագրի յաջորդական թիւերուն մէջ:

Ձմիւռնիոյ շրջանի հայութիւնը «սարսափահար ու սոված կը լեցուէին գաղութի հաստատութեանց պատսպարաններուն մէջ»: Քաղաքի վտանգին առաջը առնելու համար հայ եւ յոյն եպիսկոպոսները կ'որոշէին Սեպտեմբեր 2-ին դիմում կատարել յոյն Բարձր Գործիքներին եւ Ձմիւռնիոյ կառավարիչին արտօնութիւն ստանալու օտար դեսպանատուններու օգնութիւնը հայցելու, որուն սակայն, ինչպէս միշտ, անգլիական, ամերիկեան եւ իտալական հիւպատոսներ այլընդայլոյ պատասխաններ կուտային, խաբուսիկ եւ անտրոշ, աւարկելով որ իրենց պարտքը կատարած էին Ձմիւռնիա զրահաւորները դրկելով ամերիկեան քաղաքացիներու պաշտպանութեան համար:

Երբ մեծ պետութիւններ դատարկ եւ խաբուսիկ պաշտպանութիւն կը քարոզէին քրիստոնեաներու նկատմամբ, անդին Ղեւոնդ Եպիսկոպոս Դուրեան եւ յոյն Խրիստոստոմոս Եպիսկոպոս կը հեռագրէին Յունաստան եւ Կ. Պոլիս Հայոց Ջաւէն Պատրիարքին փոխադրանաւեր խնդրելով վտանգուած հայութիւնը անյապաղ Ձմիւռնիայէն այլուր փոխադրելու համար, առաջին հերթին դէպի Յունաստան:

Յոյներուն Նահանջը

Միւս կողմէ արդէն յոյն կառավարութիւնը տկարութեան իսկական նշաններ ցոյց կուտար պատճառ դառնալով թշնամիին անարգել թափանցումին դէպի Ձմիւռնիա: Յոյներու մեկնումով ծայր պիտի տար խուճապահար ելքը մնացեալ քրիստոնեայ տարրին, ուղղակի եւրոպական պետութեանց ներկայացուցիչներու աչքին առջեւ: Երկու օր ետք, Սեպտեմբեր 9-ին Ձմիւռնիա մտած թուրք զինուորականներ թրքական դրօշը պարզելով սկսան յառաջանալ հայոց թաղերուն ուղղութեամբ՝ պատճառ դառնալով հայոց իրենց տուններէն Սուրբ Ստեփաննոս մայր եկեղեցին ապաստանի:

Ձմիւռնիոյ հայոց Առաջնորդարանը թրքական դրօշը պարզեց ի նշան Օսմանեան տիրապետութեան: Առաջնորդ Ղեւոնդ Եպիսկոպոս կը գրէր թէ «խուժանը բռնութեամբ տուններ կը մտնէր, տնեցիները կը խոշտանգէր, եւ կողոպտելէ ետք կը սպաննէր»: 200,000-ի կը հասնէր քրիստոնեաներու թիւը Ձմիւռնիոյ մէջ: Սեպտեմբեր 6-ին ամերիկեան երկու զրահաւորներ եւս հասան մարդասիրական նպատակներով, քանի որ Միացեալ



Ս. Ստեփաննոս մայր եկեղեցին

Նահանգներ պատերազմի մէջ չէր թուրքոյ հետ, ինչպէս միւս պետութիւնները էին: Անոնք ամերիկեան քաղաքացիները հեռացուցին դէպի Միդիլիանի կղզին երբ արդէն քաղաքը թողլքուած էր:

Հայ եւ Յոյն Եպիսկոպոսներու Ահազանգը

Ղեւոնդ եւ Խրիստոստոմոս Առաջնորդ եպիսկոպոսները այս անգամ Անգլիա Քէնթըրբըրի Արքեպիսկոպոսին դիմեցին խնդրելով որ Անգլիա զինադադար առաջարկէր Քեմալի «յանուն Քրիստոսի աճապարեցէ կանխելու համար վերահաս աղէտը» ըսելով, եւ սակայն խնդրանքը տեղը չհասաւ, եւ անոր փոխարէն Անգլիա խոստացաւ պաշտպանել քաղաքի անգլիացի համայնքները:

Ձարդ եւ Հրդեհ Ձմիւռնիոյ Մէջ

Սեպտեմբեր 9-ին, 1922 շաբաթ օր, թուրք յառաջապահ զօրքեր Ձմիւռնիա մտան, եւ նոյն գիշերը յոյն եւ հայ թաղամասերը նշաւակ դարձան թուրք վայրագութեանց, եւ յաջորդ օրն ալ ջարդերը սաստկացան եւ հրդեհ մը բռնկեցաւ հայկական թաղերէ ներս: Քեմալ իսկոյն Ձմիւռնիոյ կառավարչութիւնը յանձնեց Նուրետտինին: Ինչ որ Ձմիւռնիա չէր տեսած 1915-ին, տեսաւ այդ օր երբ Քեմալական թուրքերը հայոց դէմ առին բնաջնջումի ոճրապարտ քայլը: Քաղաքին երկու երրորդը, այսինքն հայոց, յունաց եւ եւրոպացուց թաղերը հրոյ ճարակ դարձան: Սպաննուած հայերու շարքին կային Ձմիւռնիոյ թեմի քաղաքական ժողովի ատենապետը՝ օրէնսգէտ եւ իրաւաբան Նազարէթ Ներսէսեան իր կնոջ եւ զաւկին հետ:

Յոյն Սետրապոլիտը Նահատակ

Կառավարիչ Նուրետտինի առաջին գործը եղաւ տեսակցիլ յոյն մետրապոլիտ Խրիստոստոմոս Եպիսկոպոսին հետ յայտնելու համար որ Անկիւրիոյ պատերազմական ատենանը մահուան դատապարտած էր զինք, ցոյց տալով թղթածրար մը կեղծ ամբաստանութիւններով լեցուն: Բարձրատիճան հոգեւորականը խուճապին կը յանձնէր երբ եպիսկոպոսը շէնքէն դուրս կ'ելլէր: Հէք Մետրապոլիտը անկարագրելի խոշտանգումներու ենթարկելէ ետք կը սպաննէին տեղ-

ւոյն վրայ, մինչ անդին հայեր զանգուածաբար կը կոտորէին ումբակոծելով Ս Ստեփաննոս եկեղեցին ուր հազարաւոր հայեր խուճուած էին:

Երկու Քաջ Հայ Կիներ

Երկու հայ կիներ յանձն կ'առնէին խնդրագիր նամակներ հասցնել եւրոպական հիւպատոսարաններուն՝ ծպտուած որպէս հիւանդապահուհիներ: Նամակները հասան իտալացի Աւագերէց Տօն Սքալիարինիի ձեռքը, որուն միջնորդութեամբ ումբակոծումը կը դադրէր եւ հազարաւոր ապաստանեալներ եկեղեցիէն դուրս կը բերուէին: Երբ Աւագերէց Սքալիարինի կը շրջէր հայոց թաղերը, կը տեսնէր երկու ծպտեալ կիները, եւ լսելով անոնց թախանձանքը կը խոստանար հրամանատարին երթալ եւ անոր գթութիւնը հայցել:

Նոյն օր Երէջը կը վերադառնար Ս Ստեփաննոս հայոց եկեղեցի աւետելու հրամանատարին բարի հրահանգը, որուն շնորհիւ յարձակումները կը դադրէին: Սեպտեմբեր 12-ին յատուկ յանձնախումբ մը, երկու լատին եկեղեցականներէ, երկու եւրոպացի նաւազներէ եւ մէկ թուրք սպայէ բաղկացած, Սուրբ Ստեփաննոս եկեղեցին գալով դուրս կը հանէին բոլորը որոնց մէջ նաեւ 2,000-ի չափ մանուկներ: Երեկոյեան ժամուն եկեղեցին պարպուած էր եւ թուրքեր տիրացած անոր:

Ազատարար Յունական Նաւերը

Հակառակ քաղաքի համատարած հրդեհին, 1922 Սեպտեմբեր 24-ին Յունական յաճանաւ մը Ձմիւռնիա գալով ազատեց 15,000 մարդիկ, կիներ եւ երախաներ: Երկու օր ետք այս անգամ 17 յունական նաւեր եկան եւ 40,000 մարդիկ եւս փոխադրեցին Միդիլիանի: Անոնց յաջորդեց անգլիական փոխադրանաւ մը, եւ Հոկտեմբեր 1-ին, ընդամենը 180,000 գաղթականներ Ձմիւռնիայէն փոխադրուած էին Մուսթաֆա Քեմալի տուած ժամկէտէն միայն վեց ժամ առաջ: Անոնցմէ անկախ 60,000 հոգի եւս ազատեցան անգլիական եւ յունական նաւերով: Ձմիւռնիայէն ազատագրուած քրիստոնեայ տարրին ընդհանուր թիւը կը հասնէր 250,000-ի, անոնց մէջ սակաւաթիւ հայեր որոնք ազատեցան ու միացան աղէտէն առաջ հոն բնակող 25,000-ի հասնող հայութեան:

Ա. Ե. Մ. Յովսէփեան Վարժարանի Հինգերորդ Եւ Ութերորդ Դասարաններու Աւարտական Հանդէսը



Կիրակի, 26 Յունիս 2022-ի երեկոյեան տեղի ունեցաւ Արեւմտեան Թեմէն ներս գործող Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ա. Ե. Մ. Յովսէփեան Վարժարանի հինգերորդ եւ ութերորդ դասարաններու ամառային ավարտական հանդէսը, ներկայութեամբ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրաբեկեանի, Վարժարանի անօրէնութեան, ծնողներու, բարեկամներու եւ շրջանաւարտներու:

Այնուհետեւ ամառային հանդէսի գեղարուեստական բաժինէն յետոյ՝ տեղի ունեցաւ վկայականներու յանձնման արարողութիւնը: Վկայականներու բաշխումէն ետք, Առաջնորդ Սրբազան Հայր իր հայրական բարեմաղթութիւնները փոխանցեց նախ աշակերտներուն, ապա բարձր գնահատեց ուսուցիչներուն ժրջան աշխատանքը եւ անոր արգասիքը հանդիսացող հայաշունչ եւ հոգեպարար այս հանդէսը, շնորհակալու-



Հանդիսութիւնը բացուեցաւ Տէրունական «Հայր Մեր» աղօթքով եւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգի երգեցողութեամբ, որմէ վերջ, Վարժարանի Տնօրէն Շահէ Մանկրեան ողջունեց ներկաները եւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօրը այս միջոցառումը իր ներկայութեամբը պատուելու համար:

Թիւն յայտնեց նաեւ ծնողներուն՝ փոքրիկներուն հայեցի դաստիարակութեան մէջ իրենց ունեցած ներդրումին համար, շեշտելով հայ դպրոցի եւ ուսման կարեւորութիւնը: Վկայականներու բաշխումէն յետոյ երեկոն փակուեցաւ Սրբազան Հօր «Պահպանիչ» եւ «Հայր մեր» աղօթքներով:

Իրաքահայերու Հայ Ընտանեկան Միութեան Շաբաթօրեայ Վարժարանի 43-րդ Ամառային Հանդէսը Եւ Վկայականներու Տուչութիւն



ԽԱՉԻԿ ԾԱՆՈՅԵԱՆ

Այս վարժարանի դասերը երկու տարի հեռակաջ կապով տեղի ունեցան:

Այս տարեշրջանին 2021-2022 պատկաձեւ ժահրի սահմանափակումները մասամբ մեղմացած ըլլալով, բոլոր ամէնօրեայ եւ շաբաթօրեայ վարժարաններուն նման, մեր վարժարանն ալ աշակերտութեան ֆիզիքական ներկայութեամբ, վարժարանի շատ արդիւնաւէտ տարի մը ունեցաւ:

Սեպտեմբեր 2021-ին երկրորդ Շաբաթը, դպրոցի վերամուտի օրն էր: 88 աշակերտ-աշակերտուհիներ մեծագոյն հաճոյքով դպրոց սկսան զալ: Հոկտեմբերի երկրորդ Շաբաթը, տեղի ունեցաւ Մշակոյթի ամսուայ ձեռնարկը: Միայն չորս շաբաթ դպրոց յաճախող այս փոքրիկները Մշակոյթի ամսուան աւիթով, իրապէս շատ գեղեցիկ հանդիսութեամբ նշեցին Սրբոց Թարգմանչաց մեծխորհուրդ տօնը: Այս ձեռնարկէն ետք, Նոյեմբերին դպրոցէն ներս Աստուծոյ փառք եւ

Քրիստոսի Յարութեան սքանչելի տօնը, Մայիս ամսուայ տօներէն մին՝ մայրերու տօնը, շատ գեղեցիկ ձեռնարկով մը մեր փոքրիկները անխառն սիրով ողողեցին իրենց թանկագին մայրերը:

Այս տարի եւս մեր դպրոցը այցելեցին գաղութիս հոգեւոր, աշխարհիկ մեծանուն գործիչներ, մտաւորականներ եւ հասարակական գործիչներ Հայաստանէն կամ մեր գաղութէն:

Իսկ ամէնէն ուշագրաւ եւ անմոռանալի օր մը եղաւ Հայաստանի Հանրապետութեան մեր համայնքի ամբողջական սէրն ու յարգանքը վայելող, երկու շրջանի նախկին Գլխաւոր Հիւպատոս, դեսպան՝ Դոկտ. Արմէն Բայբուրդեան, որ հակառակ իր արտակարգօրէն զբաղած ըլլալուն, այս համեստ վարժարանը այցելեց եւ իր խորագոյն տպաւորութիւնները կիսեց պատասխանատուներուն հետ: »Միւրեւի փոքրիկներ, հիւսն տակաւին շատ փոքր էք, բայց երբ մեծնաք ինչ դիրքի եւ պաշտօնի վրայ ըլլաք, յիշեցէք եւ այցելեցէք ձեր



շնորհակալութիւն յայտնելով նշուեցաւ Գոհաբանութեան Օրը, ինչպէս ամէն տարի այս տարի եւս դպրոցի աշակերտութիւնը դրահամահաւաք մը կազմակերպեց ի նպաստ Հայաստան Համահայկական Հիմնադրամի, իսկ Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան Տօներուն աւիթով, տեղի ունեցան այս տօներու աշխարհիկ եւ հոգեւոր տօները, կաղանդ պապային մասնակցութեամբ, երգով, խօսքով արտասանութիւններ կատարելով, աշակերտութիւնը Ձմեռ պապիկէն ստանալով իրենց նուէրները:

պապերուն եւ ձեր Մայր Հայրենիքը», յորդորեց Պրն. Գլխաւոր Հիւպատոսը:

Աշակերտութեան, ուսուցիչներուն եւ միութենական ղեկավարներուն համար, այդ օր անշնջելի եւ յիշատակելի օր մըն էր պարգապէս:

Նմանապէս այս տարի առաջին անգամ ըլլալով մեր վարժարանը այցելեց Կլենտէյլ քաղաքի Կրթական Խորհուրդի նախկին նախագահ եւ 17 տարի սոյն Խորհուրդի անդամ եղած՝ Տիար Կրէկ Գրիգորեան: Յարգելի հիւրը ոչ միայն ինք, այլ իր ծնողները նաեւ ԱՄՆ ծնած հայեր եղած են: Պրն. Գրիգորեան իր հիացմունքը յայտնեց եւ ներողութիւն խնդրեց ըսելով. «17 տարիներուն Կլենտէյլ քաղաքի բոլոր դպրոցներուն ծա-

2022-ի տարուայ ընթացքին ունեցանք նոյնքան շահեկան եւ խորիմաստ ձեռնարկներ, Ապրիլ 24-ին շատ յուզիչ եւ գեղեցիկ ձեռնարկով ոգեկոչուեցաւ Մեծ Եղեռնի Սրբադատութեան նահատակներուն անմեռ յիշատակը: Իսկ անոր յաջորդող Ս. Զատիկուն եւ

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services
From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...
Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի Անմեռ Յիշատակին Յուշածողի Ձեռնդրում



Շաբաթ, Յունիս 11, 2022 առաւօտեան ժամը 10:00-ին Լոս Անճելըս գաւառի Լա Վըրն քաղաքի Mill Park-ի շատ գեղեցիկ գրասրահի մէջ բաժինը, անուանուած է Լա Վըրն քաղաքի բնակիչ, Լա Վըրն համալսարանի ամերիկահայ գոլֆի հիմնադիր եւ նախագահ, Ամերիկայի ողջ տարածքին մէջ առաջին հայ գոլֆիստ «Մաշտոց Գոլֆ»-ի հիմնադիր եւ 20 տարիէ աւելի եղած է գոլֆի նախագահ եւ երեք ամերիկեան համալսարաններու մէջ դասախօս՝ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի անունով:

Այդ օր տեղի ունեցաւ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի պուրակի եւ յուշածողի պաշտօնական բացման շատ տպաւորիչ եւ յիշարժան արարողութիւնը:

Ձեռնարկը կազմա-կերպուած էր Rotary Club միջազգային կազմակերպութեան Ամերիկայի տնօրէնութեան խորհուրդի կողմէ: Ներկայ էին միջազգային ակումբի ղեկավարները, Լա Վըրն քաղաքի հին եւ նոր քաղաքապետները, ոստիկանները ջոկատով մը Լա Վըրն համալսարանի տնօրէնութիւնը եւ Մաշտոց Գոլֆի ուսուցչական կազմի եւ բազմաթիւ ուսանող-ուսանողուհիներ, ընտանիքի անդամները եւ ամերիկահայ ազգային եւ կրթական կեանքի անասանան սիրով ու նուիրումով ծառայած, հայրենասէր այս ղեկավարին մեծաթիւ ծանօթներէ բաղկացած՝ հոծ բազմութիւն մը ներկայ էր անուանակոչման այդ արարողութեան:



Արարողութիւնը սկսաւ Մաշտոց Գոլֆի ուսանողուհիներէն Անճելա Ամիրեանի «Մքանչելի Շնորհք» եւ հայկական «Կիրիկի» ջուլթակի վրայ հոգակապ կատարումով: Հանդիսատարն էր Լա Վըրն քաղաքի Rotary Club-ի Լա Վըրն մասնաճիւղի ատենապետուհի Տէպպի Տեսի ողջունի եւ բարի գալուստի խօսքէն ետք հրաւիրեց հանգուցեալի գաւազը՝ Պատուելի Դոկտ. Ճանի Տէր Եղիայեան,

աղօթքով սկսելու համար այդ արարողութիւնը, ապա հրաւիրուեցաւ հանգուցեալի մեծ որդին ճէյմս Տէր Եղիայեան, որ շատ ամփոփ կերպով խօսեցաւ իր հօր աշխատանքներուն մասին: Անոր յաջորդեց Rotary Club-ի Լոս Անճելըս Գաւառի նախագահ՝ Շարօն Ճանսըն, որ խօսեցաւ հանգուցեալին հետ բազմաթիւ ճամբորդութիւններու ընթացքին, իր ունկնդիրներուն վրայ ձգած անջնջելի ազդեցութիւնը, եւ շնորհակալութիւն յայտնեց քաղաքապետ Թիմ Հաբըրնին, որ նման այգի մը տրամադրեց այսպիսի մարդու մը, որուն ողջ կեանքը խաղաղութիւն, սէր եւ ժողովուրդներու մէջ համերաշխութիւն սերմանելն էր:

Մեր կողմէ յիշենք, թէ հանգուցեալ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան 40-է աւելի երկիրներ ճամբորդած է Rotary Club ժողովուրդներու մէջ խաղաղութիւն, սէր եւ համերաշխութիւն քարոզելով եւ այս յուշածողի վրայ իր գիտցած 4 լեզուներով հայերէն, անգլերէն, արաբերէն եւ ֆրանսերէն գրուած է հետեւեալ նախադասութիւնը. Թող խաղաղութիւն, տիրէ համայն աշխարհի վրայ: Հանգուցեալի կրտսեր որդին պատուելի՝ Դոկտ. Ճանի Տէր Եղիայեան խօսք առնելով, շնորհակալութիւն յայտնեց Rotary Club-ի ղեկավարներուն, Լա Վըրն քաղաքապետներուն եւ բոլոր անոնց,

Անցեալ Վեց Ամիսներուն, Հայաստան Արցախ Ֆոնտը \$16.5 Միլիոնի Դեղորայք Եւ Բժշկական Պիտոյքներ Հայթայթած Է Հայաստանին Ու Արցախին

Յունուարէն Յունիսի միջեւ, Հայաստան Արցախ Ֆոնտը \$16.5 միլիոն արժէքով մարդասիրական օժանդակութիւն հայթայթած է Հայաստանին ու Արցախին: Սոյն օժանդակութիւնը իրականացնելու համար, Հայաստան Արցախ Ֆոնտը \$16 միլիոն արժէքով դեղեր եւ բժշկական պիտոյքներ ապահոված է AmeriCares (\$12.9 միլիոն) եւ Direct Relief (\$3.5 միլիոն) կազմակերպութիւններէն:

Այս ժամանակաշրջանին մեծարժէք ապրանքներ նուիրած են նաեւ Հաուըրտ Գարակէօզեանի Յիշատակի Ընկերութիւնը (\$78,700), Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը (\$50,700), Բժ. Ալպերթ Ֆիլիպս (\$15,700), եւ Բժ. Հրայր Կարապետեան՝ Medical Outreach for Armenia կազմակերպութիւնէն (\$10,000):

Այս ժամանակաշրջանին նուիրաբերուած դեղորայքն ու բժշկական պիտոյքները առաքուած են ՀԲԸՄ Քրտիա Նազարեան Սուրբհայ Գաղթականներու Բժշկական Կեդրոնին, Արաբկիր Միացեալ Մանկական Բարեգործական Հիմնադրամին, Քանաքեռ-Զէյթուն Բժշկական Կեդրոնին, Մուրացյան Մանկական Գեղձաբանական Կեդրոնին, Ռ. Յոլյանի անուան Արիւնաբանական Կեդրոնին, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Բժշկական Կեդրոնին, եւ Հայաստանի ու Արցախի Առողջապահութեան Նախարարութ-

իւններուն: 2022-ի առաջին վեց ամիսներուն, Հայաստան Արցախ Ֆոնտը հայրենիք առաքած է հրատապօրէն անհրաժեշտ դեղեր ու բժշկական պիտոյքներ՝ քաղցկեղի, արեան, սրտի, եւ ստամոքս-աղիքային հիւանդութիւններէ տաուապողներու համար:

Անցեալ 33 տարիներուն, Հայաստան Արցախ Ֆոնտն ու զայն նախորդած Միացեալ Հայկական Ֆոնտը Հայաստանին ու Արցախին հայթայթած են \$962 միլիոն ընդհանուր արժէքով մարդասիրական օժանդակութիւն՝ 158 թուիչքներով եւ 2,530 ծովային արկղերով:

«Հայաստան Արցախ Ֆոնտին կանոնաւորաբար կ'առաջարկուի, բոլորովին անվճար կերպով, միլիոնաւոր տոլար արժէքով կեանք փրկող դեղեր եւ բժշկական պիտոյքներ», յայտնեց Հայաստան Արցախ Ֆոնտի Նախագահ Յարութ Սասունեան եւ շարունակեց՝ «Մեզի կը մնայ հոգալ առաքման ծախսը միայն: Ուրեմն կը քաջալերենք ձեր առատաձեռն նուիրատուութիւնները, որպէսզի կարենանք շարունակաբար այս կենսական օժանդակութիւնը ուղարկել Հայաստանի եւ Արցախի բոլոր բժշկական կեդրոններուն»:

Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Հայաստան Արցախ Ֆոնտի գրասենեակին. հեռաձայնի թիւ՝ (818) 241-8900. Իմէյլի հասցէ՝ sassoun@pacbell.net:

որոնք նիւթապէս եւ բարոյապէս օգնեցին այս գեղեցիկ պուրակը իր հօր անունով անուանելով, ապա հրաւիրեց իր մայրը, որ փակման խօսքը ըսէ:

Տիկ. Անժելա Տէր Եղիայեան հրապարակախօսի սքանչելի ելույթով շնորհակալութիւն յայտնեց ներկայ եղողներուն, նիւթապէս եւ բարոյապէս այս յուշածողին եւ պուրակի բարեգարդման նուիրատուութիւններ տուողներուն:

Հոյակապ երգչուհի Լիզա ձէսպայի եւ բոլոր ներկաներուն մասնակցութեամբ երգուեցան «Տէրունական Աղօթքը» եւ

«Հոյակապ Օրհնութիւն» աղօթքները: Տիկ. Անժելա Տէր Եղիայեանի ժապաւէնի կտրուածով վերջ գտաւ այս շատ ճոխ եւ մեզի համար հաճելի անակնկալ հանդիսացող ձեռնարկը:

Ողբացեալ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի բարի յիշատակը բազմաթիւ ծանօթներու, ընկեր-ընկերուհիներու, ուսանողներու եւ ազգայիններու սրտին եւ մտքին մէջն է ու պիտի մնայ: Իսկ Rotary Club-ի բոլոր անդամներուն եւ ղեկավարութեան մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք մեր ազգակիցին նման յարգանք մը մատուցելու համար:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

Ուժերի Հաւասարակշռութեան Խախտումը

Շարունակուած էջ 2-էն

ուամիջոցներն օրերս յայտնեցին, որ 2022 թ. Հոկտեմբերի 17-28-ը Ադրբեջանը, Թուրքիան եւ Վրաստանը համատեղ «Eternity-2022» զորավարժութիւններ կ'անցկացնեն: Պաշտօնական տեղեկատուութեան համաձայն՝ զորավարժութիւնները պլաններէ համաձայնեցման վերաբերեալ առաջին հանդիպումն արդէն կայացել է: Նմանատիպ զորավարժութիւն էր անցկացուել նաեւ 2021 թ. Հոկտեմբերին՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նաւթամուղի անվտանգութեան ապահովման եւ երեք երկրներէ զորամասերի փոխգործունակութիւնն իրականացնելու սցենարով: Պետութեան հիմնական ռեսուրսները ներդնելով սպառազինութեան եւ ռազմական արդիւնաբերութեան զարգացման վրայ՝ Թուրքիան եւ Ադրբեջանը ոչ միայն խախտում են ռազմական հաւասարակշռութիւնը տարածաշրջանում Հայաստանի, այլեւ ՌԴ-ի հետ, որն աւանդաբար ուշադրութիւն է դարձնում իր սահմաններէ անմիջական հա-

րեւանութեամբ ընթացող ռազմական տեղաշարժերին՝ այն համարելով իր անվտանգութեան ապահովման գոտի: Տարածաշրջանում իրավիճակն ապակայունացնելու Ադրբեջանի քայլերի մասին խօսեց նաեւ ՀՀ վարչապետը նախօրէին տրուած ասուլիսում: Այսօր Բաքուն եւ Անկարան աւելացնում են տարածաշրջանի լարուածութիւնը, քանի որ այդ զորավարժութիւնները եւ ՆԱՏՕ-ի չափանիշներէ տակ Ադրբեջանի գինուած ուժերի տեղափոխումը մէկ նպատակ ունեն՝ տարածաշրջանում Թուրքիայի ազդեցութեան մեծացում, որին վաղ թէ ուշ պարտադրուած է լինելու պատասխանել նաեւ Ռուսաստանը:

Հետեւաբար, տարածաշրջանում ռազմական հաւասարակշռութեան խախտումը սպառնում է նոր ապակայունացմամբ, ինչը տրամագծօրէն հակառակն է Անդրկովկասը խաղաղութեան շրջանի վերածելու Անկարայի եւ Բաքուի յայտարարութիւններին:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Արկածային Երկու Պատմութիւն

Շարունակուած էջ 14-էն

վերագրելու իմ յաջողութիւնը եւ պիտի կարողանար կորզել մայրիկիս հետ նախապէս պայմանաւորուած գումարը:

Յետագայում ճշդուեց, որ նա շատ սովորական խաբէբայ էր եւ բնաւ կապ չ'ունէր որեւէ ուսումնական հաստատութեան հետ: Նա նման արկածախնդրութեան էր ենթարկել այլ բազմաթիւ ընտանիքների եւս:

Ընթերցողի մօտ կարող է հարց առաջանալ, թէ ինչո՞ւ էր այդ ստահակ Սուքիասեանը իր գոհերին գայթակղելու համար չատկապէս ընտրել Երեւանի Գիւղատնտեսական ինստիտուտը: Որովհետեւ այդ ուսումնական հաստատութիւնում դիմորդները մրցակցութիւն չկայ եւ միջակ գնահատա-

կաններով անգամ կարելի է ընդունուել այդ ինստիտուտը: Եթէ նրա տասը գոհերից երկուսն էլ ընդունուէին, մեր հերոսը իրեն վերագրելով նրանց չաղթանակը, բաւական դրամ կը շորթի նրանցից:

Այս տհաճ պատմութեան մէջ ամէնացաւային այն էր, որ ես որեւէ այլ ուսումնական հաստատութիւն չէի կարող դիմում ներկայացնել: Բոլոր ուսումնական հաստատութիւններում ընդունելութեան քննութիւնները սկսում եւ աւարտում էին միաժամանակ:

Նշանակում է, ես դարձեալ պարտաւորուած էի մէկ տարի եւս սպասել ինստիտուտ ընդունուելու համար: Եթէ յաջորդ տարի էլ ինստիտուտ չ'ընդունուէի՝ սովետական բանակ էի զօրակոչուելու:

Իրաքահայերու Հայ Ընտանեկան Միութեան

Շարունակուած էջ 16-էն

նօթ էր, իսկ այս հրաշք դպրոցին ծանօթ չէի մինչեւ հիմա», հաստատելով որ միշտ կապ պիտի պահէ այս դպրոցին հետ:

Այս ձեռնարկներէն ետք Շաբաթ, Յունիս 11, 2022-ին տեղի ունեցաւ դպրոցի 43-րդ ամավերջի հանդէսը շատ ճոխ եւ հարուստ յայտագրով:

Այդ օր, լսելէ ետք աշակերտութեան կատարած բազմապիսի երգերը, արտասանութիւնները, որոնք բոլորովին Հայաստանի դպրոցներու մէջ դասաւանդած նորագոյն ազգային, հայրենասիրական, ըլ մայրասիրութեան, մշակութասիրութեան երգեր ըլլալով խորապէս յուզեցին ներկայ ծնողները եւ նոյնիսկ ուսուցչուհիները, որոնց աչքերէն արդարօրէն ուրախութեան եւ հպարտութեան արցունքներ հոսեցան:

Վերջաւորութեան խօսք առաւ վարժարանի հիմնադիր եւ 43 տարիներու պատասխա-

նատու՝ Պրն. Խաչիկ ձանոյեան, որ գնահատանքի ամենաջերմ խօսքերով նախ գնահատանք յայտնեց վարժարանի տնօրէնուհի Տիկ. Անահիտ Խաչատուրեանին իր ամբողջական նուիրումին գոհողութեան համար: Ան շնորհակալութիւն յայտնեց մեր հոյակապ թանկագին կամաւոր ուսուցչուհիներուն, անոնց օգնականներուն: Իւրաքանչիւր դասարան իր ելույթներէն ետք իրենց յատուկ վկայականները ստացան տնօրէնութեան, Պրն. ձանոյեան եւ իրենց թանկագին ուսուցչուհիներուն կողմէ:

Վերջաւորութեան շնորհակալութեան խօսք մը ուղղեց իրաքահայերու Ընտանեկան Միութեան 43 տարի շարունակ անվճառ այս վարժարանը կը պահեն, իրենց կողքին ունենալով կամաւոր, թանկագին եւ պատուական ուսուցիչ-ուսուցչուհիները:

Պաշտօնական բաժինէն ետք, բոլոր ուսուցչուհիները, անոնց օգնականները եւ դպրո-

ԿԱՐՆՈՅ ԵՒ ԳՈՒՄ ԳԱՓՈՒԻ ՑՈՅՑԵՐԸ

Շարունակուած էջ 7-էն

րենաս տնտեսական դրութիւնդ պահանջներու համեմատ ազատաբար կարգադրել: Նախ քո քաղաքական վիճակը պէտք է յեղափոխես, քո քաղաքական պահանջներդ ի կատար ածես, որպէսզի միջոց ունենաս քո տնտեսական վիճակդ ալ բարելաւելու:

Քաղաքականապէս դու ինքդ պիտի ըլլաս քո ինքնավար Տէրը: Պիտի ըլլայ Օրենսդիր ժողով մը, իբրեւ ժողովրդային ներկայացուցչութիւն, որոնց անդամները կ'ընտրուին ազատ կերպով, ընդհանուր քուէարկութեամբ, առանց խտրութեան կրօնի, դասակարգի, սեռի, պարապմունքի եւ կարողութեան: Այդ Օրէնսդիր ժողովը պէտք է ունենալ կատարեալ իրաւունք ազգային կառավարչական բոլոր հարցերու մէջ: Հայաստանի նահանգները պէտք է ունենան ընդարձակ ինքնավարութիւն....:

Գիտնանք մեր գործը առաջ մղել եւ մեր դատը պաշտպանել նոյնիսկ ամենայ ծանր եւ ամէնասուղ գնով: Կեցցէ՛ Հայ ժողովուրդը, որոյ միակ աղաղակն այժմ պէտք է ըլլայ՝ ՄԱՀ ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ:

Ճանկիւլեան այս Պահանջագիրը արդէն վերջաւորութեան կը հասնէր, երբ Սուքիաս քահանան ետեւէն կը խլէ թուղթը ու կը փախչի խաչկալին ետեւը: Ճանկիւլեան ատրճանակը քաշած կը հալածէ քահանան: Մուրատ կը յառաջանայ Աշրգեան Պատրիարքին կողմը եւ խստութեամբ կ'առաջարկէ որ իր հետ կառք նստի եւ երթայ պալատ Պահանջագիրը ներկայացնելու համար: Աշրգեան Պատրիարք կը փախի սարսփահար եւ կը պահուտի:

Այդ պահուն Մայր Եկեղեցիին հրշէջ խումբը ներս կը խուժէ: Ճակիւլեան ատրճանակը կը պարպէ օդին մէջ, որմէ հրշէջները ետ-ետ կը փախչին, բայց թիւով գերազանց ըլլալով կը սկսին հարուածել Ճանկիւլեանը: Վրայ կը հասնի Սեբաստացի Յովակիմ. կը վռնտէ հրշէջները եւ կը խնամէ Ճանկիւլեանի վէրքերը, որուն գէնքերը խլուած էին: Մայր Եկեղեցիին գանգակները անընդհատ կը զարնուէին: Ծովածաւալ բազմութիւնը խռնուած էր բակն ու շրջակայքը: Ճանկիւլեան եւ Յովակիմ ժողովուրդը կը մղեն դէպի Պատրիարքարանն:

Մուրատ եւ Ճանկիւլեան ամէն միջոցի կը դիմեն Աշրգեան Պատրիարքը առնել պալատ տանելու համար, սակայն ան կը յամառի եւ կը մնայ աթոռին ամուր կառչած:

Պատրիարքարանը պաշարուած էր զինուած ընկերներով: Անոր գաւիթին ապակիները ջարդ ու փշուր եղած էին ժողովուրդին կողմէ: Յուցարարները ատրճանակի հարուածներով ծակ-ծակ ըրած էին դահլիճին առաստաղը:

ցի պատասխանատուները սիրոյ սեղանի մը հրաւիրուած էին դպրոցի տնօրէնութեան կողմէ: Հոն սրտի խօսքերով, բաժակաճառերով, խմբերգներով շատ հաճելի ժամանակ անցուցին մեր կրթական մշակները:

Բոլորին վարձքը կատար: Յիշենք, թէ Մայրիսին տեղի ունեցան յառաջիկայ տարուայ

ձանակիւլեան դահլիճ մտած պահուն աչքը կը հանդիպի պատէն կախուած ԹՈՒՂՐԱԿին: (որ թուրք պետական գինանշանը կը ներկայացնէր): Ժողովուրդի բացազանչութեանց մէջ՝ Ճանկիւլեան Թուրքիան պատէն վար կ'առնէ եւ ոտքերուն տակ փշուր-փշուր կ'ընէ: Մինչ Հնչակեան ճառախօսները խումբ-խումբ հաւաքուած ժողովուրդին կը կարդային Պահանջագիրը, անդին՝ Տաճատ Վարդապետ կը փութար ոստիկանատուն եւ կառավարական ուժերը կը հրաւիրէր եկեղեցի: Մուրատ եւ Ճանկիւլեան կրցած էին սպառնալիքի տակ համոզել Աշրգեան Պատրիարքը, որպէսզի միասին պալատ տանին Պահանջագիրը: Երբ հազարաւոր ամբոխը կը տեսնէ անոնց Պատրիարքարանէն վար իջնելը՝ խանդավառութեամբ կը բացազանչէ. Կեցցէ՛ Հայ Ազգը, կեցցէ՛ ազատութիւնը, կեցցէ՛ Հայաստանը, կեցցէ՛ Հնչակեան կուսակցութիւնը:

Աշրգեան Պատրիարքը կը նստեցնեն կառք, դիմացը ունենալով Ճանկիւլեանը:

Կառքը հագիւ տեղէն շարժած էր, երբ կը հասնին 50-ի չափ գինուած ոստիկաններ եւ կը պաշարեն կառքը: Կառքը կը կեցնեն եւ Ճանկիւլեանը կը ձերբակալեն: Այնուհետեւ զինուորները կը դիմեն դէպի ցուցարարները եւ կը ստիպեն ցրուել: Ժողովուրդը կը յամառի եւ չուզեր տեղէն շարժիլ: Զինուորները հրացանը կը պարպեն ժողովուրդին վրայ, իսկ ժողովուրդը ատրճանակի հարուածներով կը պատասխանէ: Փողոցը պահ մը կը դառնայ կատարեալ պատերազմի դաշտ:

Վանեցի Մանուկ Նալպանտեան զօրքերուն վրայ կատարած յարձակման պահուն կ'իջնայ անոնց սուրբու հարուածներուն տակ: Յուցարարները նահատակին արիւնը տեսնելով՝ ա՛լ աւելի կատաղութեամբ կը կռուին, սաստկացնելով գնդակներուն տարափը: Թուրք զինուորները կը պահուտին պատերուն տակ: Տասնապետ սեբաստացի Յովհաննէս Ղուծրուեան, ատրճանակը ձեռին, ուղղակի կը յարձակի պահուտած զինուորներուն վրայ, բայց զարնուելով գետին կ'իջնայ: Բազմութեան խումբ մը՝ կատաղած՝ կը յարձակի զինուորներուն վրայ եւ ծանրապէս կը վիրաւորէ անոնցմէ մէկ քանին: Այդ միջոցին թուրքերու օգնական ուժերը կ'աւելնան եւ հայերը կը ստիպուին դադարեցնել կռիւը: Կռուի դաշտին վրայ ինկած էին Մանուկ Նալպանտեան եւ Յովհաննէս Ղուծրուեանը:

Գուրպան Պայրամի օրն էր: Հնչակեան այս զգայացունց եւ անօրինակ ցոյցին լուրը արագութեամբ կը տարածուի քաղաքի մէջ: Տօնական ընդունելութեան ատեն պետական բոլոր շրջանակներու խօսակցութեան նիւթը այդ կ'ըլլայ:


արձանագրութիւնները: Ինչպէս յիշեցինք մեր դպրոցի հասցէն է 214 Fairview, Glendale CA, իսկ դպրոցի ժամերն են Շաբաթ ժամը 10-12:

Բարի ամառնային արձակուրդ եւ մինչ Սեպտեմբեր ամսուան հանդիպումն, համայն հայ աշակերտներուն եւ ուսանողներուն կը մաղթենք անփորձանք եւ բարի արձակուրդ մը:

Լեւոն Գաթրճեան Յաւերժի Ճամբորդ

Ոչ եւս է սփիւռքահայ տաղանդաւոր երգիչ, աշուղական եւ ազգագրական երգերու լաւագոյն մեկնաբան Լեւոն Գաթրճեան:

Ինքնուրույն երաժիշտը ծնած է Պէյրուս 1933-ին: Երիտասարդ տարիքին իր մէջ կոչուած զգացած է նուիրուելու հայ երգին, մասնաւորաբար աշուղական եւ ազգագրական երգերուն: Յետագային դարձաւ սիրուած մենակատար եւ գուսանական երգարուեստի լաւագոյն մեկնաբաններ Գուսան Հափասի, Գուսան Զիւանի, Սայաթ Նովայի, Գուսան Շերամի արժանաւոր հետեւորդներէն մին:



Լեւոն Գաթրճեան տասնամեակներ շարունակ միշտ վառ պահած է գուսանական երգերու ջահը եւ մենահամերգներով հանդէս եկած բազմաթիւ հայաշատ գաղութներու բեմերուն վրայ: Իսկ Մայր Հայրենիքի մէջ ելուցներ ունեցած է մասնակցութեամբ Հայաստանի գուսանական երգերու պետական համոյթին եւ «Ակունք» ազգագրական համոյթէն:

Հանգիստ յաւերժի ճամբորդ սիրելի Լեւոնին:

Ոչ եւս է Տաղանդաւոր Երաժիշտ Անահիտ Սեդրակեան-Խուլորեան

Խոր ցաւով վերահասու եղանք տաղանդաւոր երաժիշտ, երգահան եւ մանկավարժ Անահիտ (Իտա) Սեդրակեան Խուլորեանի մահուան, որ պատահեցաւ Յունիսի 30ին յետ երկարատեւ հիւանդութեան: Հանգուցեալը ծնած է 1933 Յունիսի 19ին: Իր երաժշտական ուսումը ստացած էր Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցին մէջ: Աւարտած է մանկավարժական համալսարանը: Դասախօսութիւններով եւ մանկավարժութեամբ զբաղած է տարբեր հաստատութիւններու մէջ: Ամուսնացած էր հանրաժանօթ փիլիսոփայ եւ հայագէտ փրոֆ. Դոկտ. Գէորգ Խուլորեանին հետ եւ բախտաւորուած երկու դուստրերով Մարինէ եւ Արփի:



Անահիտ Սեդրակեան Խուլորեանը կարելի է դասել հայ լաւագոյն կին երաժիշտներու եւ յորինողներու շարքին, թէ որպէս երգահան-յորինող եւ թէ կատարող ու մանկավարժ: Այս բոլորի խօսուն վկաններն են իր տասնեակ տարիներու երախտագէտ աշակերտներն ու մասնաւորաբար իր զեղարուեստական ստեղծագործութիւնները: Հրապարակուած յատուկ խտասանիկներով:

Անահիտ Խուլորեան Սեդրակեանի երաժշտական արգասիքը կը տեսնենք իր ստեղծագործութիւններու յորինած գոյգ մը խտասանիկներու մէջ «Կեանքը Սէր է» (2003) եւ «Վառել Լոյսերը Հոգու...» (2008): Այստեղ ամփոփուած են իր աւելի քան երկու տասնեակ հոգեգմայլ եւ հայադրոշմ երգերը, հոգեւոր, հայրենասիրական ու այլ թեմաներով: Երգերուն մեծ մասին խօսքերը գրուած են Գէորգ Խուլորեանի եւ Աւիկ Տէիրմէնճեանի կողմէ, իսկ հոգեւոր երգերու խօսքի հեղինակը՝ նոյնինքն երգահան Անահիտ Խուլորեան Սեդրակեանն է: Այս առթիւ ան ունեցած է հետեւեալ արտայայտութիւնը. «Տէր, այս բոլոր Քոնն են միայն, քանզի գրուած են Քոնը շնչանքով, Քո փառքի համար»:

Անահիտ Խուլորեան Սեդրակեանի յատկանշական ստեղծագործութիւններէն են «Ձօն Հայոց Լեզուի», «Գուցէ Երազ է», «Քաջ Լիբանան», «Անհաս Լեռներում» (նուիրուած Հայաստանի ժողովրդական արուեստագէտ Վանուշ Խանամիրեանին, ծննդեան 80-ամեակին առթիւ), «Սուրբ Վարդան», «Կեանքը Սէր է» եւ այլ յորինումներ: Իր գործերու լաւագոյն մեկնաբանները եղած են շնորհալի երգիչներ Յովիկ Գրիգորեան, Ռիմա Կարապետեան, Անի Մալճեան, Հելեն Մաթէոսեան, Մարալ Արսլանեան եւ ուրիշներ:

Հարաւային Գալիֆորնիոյ The Motion Pictures ընկերութիւնը Անահիտ Խուլորեան-Սեդրակեանը պարգեւատրած է յատուկ Պատուոյ Գիրով, առ ի գնահատութիւն իր երաժշտական եւ դաստիարակչական մեծ վաստակին:

Անահիտ Սեդրակեան Խուլորեան համեստօրէն կը միանայ այն փաղանգին որուն մաս կը կազմեն եւ դաշնակահար Գոհարիկ Ղարոսեան եւ երաժշտագէտ Յիցիլիա Բրուտեան:

Յաւիրեժական լոյս վաստակաշատ հայուհիին:

Գ. ՄՈՂՈՅԵԱՆ

ՀՈԳԵՅԱԼԳԻՍ



ՕՉԱՆՆԷՍ ՍԷՐՕՐԵԱՆ

ՕՉԱՆՆԷՍ ՍԷՐՕՐԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ մէջ, Կիրակի, Յունիս 10, 2022ին յաւարտ Ս. Պատարագի: Սգակիրներ՝ Այրին՝ Ժագլին Սէրօրեան Որդին՝ Արա Սէրօրեան Դուստրը՝ Ալին եւ Սեւակ Սաղտճեան Թոռները՝ Շահէ, Տիրան եւ Ժողէֆ Սաղտճեաններ Քոյրը՝ Հուսիսիմէ Երիքեան Քրոջ զաւակները՝ Ժուլիէթ Հէրմեզեան Լենա եւ Ժողէֆ Տէր Սահակեան եւ զաւակները (Լիբանան) Ռիթա եւ Վարուժան Աթաշբարայեան եւ զաւակները (Լիբանան) Վիլիէթ Թերզեան եւ զաւակները (Աթլանթա) Եղբայրը՝ Նշան եւ Սալբի Սրուրեան Եղբօր զաւակները՝ Արմէն եւ Լորիկ Սրուրեան եւ զաւակը Տանիէլ եւ Միշէլ Սրուրեան Մայքըլ Սրուրեան Քենին՝ Անի եւ Գրիգոր Զարուկեան եւ զաւակները Քենիի որդիները՝ Էտմոնտ եւ Գարէն Զարուկեան եւ զաւակները Շահէ եւ Յասմիկ Զարուկեան եւ զաւակները Անբորդին՝ Գրիգոր եւ Մոնիք Քէքլիքեան եւ զաւակները՝ Փիեռլին եւ Թալի Խնամիները՝ Շաքէ Սաղտճեան Հրայր Սաղտճեան Սէմ եւ Նայիրի Գասաճիքեան եւ զաւակները եւ համայն Սէրօրեան, Սրուրեան, Քէքլիքեան, Զարուկեան, Երիքեան, եւ Գասաճիքեան ընտանիքները, հարազատներն ու բարեկամները:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՆԱՅԻՍ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս»-ի խմբագրութիւնն ու աշխատակազմը իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն՝ Կարօ եւ Յովսէփ Նալպանտեաններուն, ընտանիքի անդամներուն եւ համայն պարագաներուն: »ՄԱՍԻՍ«

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՆԱՅԻՍ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ մահուան տխուր առիթով Կիլիկեան Բարեսիրական Միութեան վարչութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ \$100 կը նուիրէ «Մասիս» շաբաթաթերթին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՆԱՔԵԼ ՏԻՐՃԵԱՆ ԿԱՐԿՈՒՏԵԱՆԻ մահուան առթիւ Տիկ. Ազնիւ Մուլթաֆեան եւ զաւակը Մինաս Մուլթաֆեան ցաւակցութիւն կը յայտնեն հանգուցեալի զաւակին՝ Տէր եւ Տիկ. Վարդիվառ եւ Նայիրի Կարկուտեանին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ) 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈՒԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Հայաստանի Պասքեթպոլի Ազգային Հաւաքականը՝ Եւրոպայի Փոքր Երկիրներու Ախոյեան



Պասքեթպոլի Հայաստանի տղամարդկանց հաւաքականի յաղթանակով աւարտեցաւ Մալթայի մէջ տեղի ունեցած Եւրոպայի փոքր երկիրներու առաջնութիւնը:

Եզրափակիչ խաղին հայ պասքեթպոլիստները 84:68 արդիւնքով յաղթեցին իսպանացիներին՝ Մալթայի պասքեթպոլիստներուն: Հանդիպման ամենարդիւնաւետ խաղացող ճանչուեցաւ Հայաստանի հաւաքականի խաղացող Քրիս Ճոնսը, որ վաստակեցաւ 41 կէտ:

Մրցանակային 3-րդ տեղը զբաղեցուց Անդորայի հաւաքականը, որ մինչ եզրափակիչը կայացած խաղին 84:75 արդիւնքով յաղթած էր Ատրպէյճանի ընտրանին:

Սալահը Դարձած Է Փրենիեր Լիկայի Ամենաբարձր Վարձատրութեանը Ֆութպոլիստը

Անգլիոյ փոխախոյեան «Լիվերփուլ» հետ նոր պայմանագիր կնքած եգիպտացի յարձակող Մոհամետ Սալահը դարձած է Փրենիեր Լիկայի ամենաբարձր վարձատրութեամբ ֆութպոլիստը: 30-ամեայ խաղացողը աշխատավարձը նոր պայմանագրով շաբաթական 400 հազար անգլիական ստերլինգ է, կը հաղորդէ Daily Mail-ը:



Այս ցուցանիշով Սալահը Եւրոպայի մէջ ետ է միայն ՊՍԺ-ի աստղային յարձակողներէն՝ Ֆրանսացի Կիլիան Մպպայէն, արժենթինցի Լիոնել Մեսսիէն եւ պրագիլցի Նեյմարէն:

Սալահը «Լիվերփուլ» կազմէն ներս կը խաղայ 2017 թուականէն: Անոր փոխադրման արժէքը կը գնահատուի 90 միլիոն եւրօ:

Նեյմարի Պայմանագիրը ՊՍԺ-ի Հետ Երկարաձգուած Է

Պրագիլցի յարձակող Նեյմարի պայմանագիրը Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի հետ երկարաձգուած է մինչեւ 2027թ. Յունիս, կը հաղորդէ ֆրանսական L'Equipe-ը: Նախորդ պայմանագիրը նախատեսուած էր մինչեւ 2025թ. Յունիս: Այն կը ներառէր եւս երկու տարով երկարաձգման կէտը:

Նեյմարը 2017-ին 222 միլիոն եւրոյի դիմաց «Պարսելոնայէն» տեղափոխուած էր ՊՍԺ: Անցած մրցաշրջանին ան մասնակցած է 28 հանդիպման, նշանակած է 13 կոլ, կատարած է 8 կոլային փոխանցում:

Ոչ պաշտօնական տուեալներով, փարիզեան ակումբը մտադիր է այս ամրան վաճառել Նեյմարի փոխադրումը կամ վարձակալութեամբ տրամադրել այլ ակումբի:

Լեւանդովսկին՝ Զաւիին. Շատ Կը Ցանկան Խաղալ «Պարսելոնայի» Խումբէն

Գերմանիոյ ախոյեան Միլենիալի «Պայերն» 33-ամեայ լեհ յարձակող Ռոբերտ Լեւանդովսկին Իբիցայի մէջ հանգստի ժամանակ պատահական հանդիպում ունեցած է Սպանիոյ փոխախոյեան «Պարսելոնայի» սպանացի գլխաւոր մարզիչ Չալիի հետ, կը հաղորդէ AS-ը: Զրոյցի վերջաւորութեան Լեւանդովսկին Չալիին ըսած է, որ շատ կը ցանկայ խաղալ «Պարսելոնայէն»:

«Պայերն» մերժած է «Պարսելոնայի» 3 առաջարկները՝ փոխադրման համար պահանջելով առնուազն 50 միլիոն եւրօ:

Աւարտած մրցաշրջանին Լեւանդովսկին «Պայերն» կազմէն ներս մասնակցած է 50 հանդիպման, նշանակած 46 կոլ:

Հենրիխ Մխիթարեան. Կը Ցանկան Տիտղոսներ Նուաճել «Ինթերի» Հետ



Ֆութպոլի Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան, 33-ամեայ Հենրիխ Մխիթարեանը ազատ գործակալի կարգավիճակով «Ռոմայէն» «Ինթեր» տեղափոխուելէ յետոյ յոյս յայտնած է, որ տիտղոսներ կը նուաճէ միլանեան խումբի հետ:

«Անհամբեր կը սպասեմ նոր խումբին մէջ մարզումներու մեկնարկին: Չեմ գիտեր՝ ինչու, բայց միշտ լաւ խաղցած եմ «Ինթերի» դէմ, 3 կոլ խփած եմ, եւ կոլային փոխանցում կատարած եմ: Ես կը սիրէի խաղալ «Ինթերի» դէմ: Հիմա շատ ուրախ եմ, որ պիտի խաղամ այստեղ: Մանկութենէն միշտ երազած եմ խաղալ աշխարհի ուժեղագոյն լիկաներու մէջ: Ուրախ եմ, որ արդէն երեք տարի իտալիայի մէջ կը խաղամ, հիմա ալ պիտի ներկայացնեմ «Ինթերը»: Իսկապէս, շատ հպարտ եմ, քանի որ իմ երկրիս մէջ շատ երեխաներ կը հետեւին իմ խաղիս եւ կը ձգտին ընել նոյնը, ապագային խաղալ այս լիկայի մէջ: Յոյս ունիմ, որ օրինակ կը ծառայեմ անոնց համար:

Վարազդատ Հարոյեանը Հեռացաւ «Կադիսէն»

Ֆուտթոլի Հայաստանի ազգային հաւաքականի 29-ամեայ կեդրոնական պաշտպան Վարազդատ Հարոյեանը հեռացած է «Կադիսէն»: Երկկողմանի համաձայնութեամբ պայմանագիրը խզուած է, կը հաղորդէ սպանական ակումբի մամուլի ծառայութիւնը:




Վարազդատ Հարոյեան անցած ամրան դադարական «Աստանայէն» տեղափոխուած էր «Կադիս», որու կազմին մէջ մասնակցած է 19 հանդիպման (1648 վարկեան): Անոր պայմանագիրը «Կադիսի» հետ նախատեսուած էր մինչեւ յաջորդ մրցաշրջանի աւարտը:

Transfermarkt-ը Վարազդատ Հարոյեանի փոխադրման արժէքը կը գնահատէ 1,2 միլիոն եւրօ:

Ռոնալտուն Զի Ներկայանար «Մանչեսթր Եունայթըդի» Մարզումներուն

Փորթուգալի հաւաքականի եւ «Մանչեսթր Եունայթըդի» 37-ամեայ յարձակող Կրիշտիանու Ռոնալդուն որոշած է չնրկայանալ անգլիական խումբի առաջին մարզումին: Ան իր բացակայութիւնը հիմնաւորած է ընտանեկան հանգամանքներով:



Ռոնալդունի պայմանագիրը «Մանչեսթր Եունայթըդի» հետ նախատեսուած է մինչեւ յաջորդ մրցաշրջանի աւարտը: Ֆուտպոլիստը կ'ուզէ տեղափոխուել խումբ, որ հանդէս կու գայ Եւրոպայի Ախոյեաններու Լիկային մէջ: Անգլիական փրենիեր Լիկայի 6-րդ տեղը զբաղած եւ Եւրոպայի Լիկայի ուղեգիր նուաճած մանչեսթրեան ակումբը Ռոնալդունի տեղափոխումը վաճառելու մտադրութիւն չունի:

Եան Նեպոմնիաշչին՝ Ճատրակի Աշխարհի Ախոյեանութեան Հաւակնորդներու Մրցաշարի Յաղթող

Ռուս Եան Նեպոմնիաշչին նուաճեց ճատրակի աշխարհի ախոյեանի հաւակնորդներու մրցաշարի յաղթողի կոչումը: Նախափերջին խաղին ան սպիտակ ֆիլդերներով ոչ ոքի խաղցաւ հունկարացի Ռիչարդ Ռապորտի հետ եւ 13 հնարաւորէն վաստակեցաւ 9 կէտ:

Եան Նեպոմնիաշչին երկրորդ տարին անընդմէջ յաղթեց հաւակնորդներու մրցաշարին: Անցած տարի ան ախոյեանական մրցամարտին պարտուեցաւ աշխարհի ախոյեան, նորվեկացի Մագնուս Կարլսենին: